PUBLISHED BY
European Schoolnet
2016

# ՄԵՐ ԵՐԱԶԱԾ ՀԱՄԱՑԱՆՑԸ

Լինելով երիտասարդ և առցանց.
Վարժություններ երիտասարդների համար



Եվրամիության համաֆինանսավորմամբ

**Հատուկ շնորհակալություն.**

- **Insafe և INHOPE ցանցերի անդամներին ներդրման և այն հրաշալի աշխատանքի համար, որ նրանք կատարում են՝ խորհրդատվություն տալով երեխաներին և երիտասարդներին, որպեսզի վերջիններս դառնան համացանցային տեխնոլոգիաների պատասխանատու օգտատերեր,**
- **Եվրոպական հանձնաժողովին՝ Insafe և INHOPE ցանցերին և Համացանցի կատարելագործմանն ուղղված նախաձեռնություններին շարունակական օժանդակություն ցուցաբերելու և Համացանցը երեխաների համար ավելի նպաստավոր վայր դարձնելուն ուղղված իր առաջադեմ մոտեցումների համար,**
- **Google-ին և Liberty Global-ին՝ սույն ձեռնարկն իրականություն դարձնելուն ուղղված իրենց ջանքերի համար,**
- **«Մեդիակրթության կենտրոնին», որը Ապահով Համացանց ծրագրի շրջանակներում նախաձեռնեց «Մեր երազած համացանցը գրքի» հայերեն տարբերակի ստեղծումը,**
- **այն բազում երիտասարդներին՝ ներդրման և սույն ձեռնարկի բոլոր վարժությունները փորձաքննության ենթարկելու համար, ինչպես նաև Եվրոպական դպրոցների ցանցի հետ աշխատող Կրթության նախարարներին և Եվրոպական դպրոցների ցանցի թիմին ուսուցման և ուսումնառության հարցում համացանցային տեխնոլոգիաներն ինտեգրելու միջոցով ուսումնառության գործընթացը բարեփոխելու ոլորտում իրենց համագործակցության և նվիրվածության համար:**

# Նախաբան

Հրաշալի է լինել առցանց: Մենք կարող ենք հանդիպել ընկերների, փոխանակել մեր սիրելի երաժշտությունն ու նկարները և նույնիսկ փոխել աշխարհը, եթե Մալալայի և Մարթայի նման ունենք փայլուն գաղափարներ, գրելու հրաշալի ունակություններ և նախաձեռնողականություն (տես էջ 15):

Սույն ձեռնարկի էջերով անցնելիս կարող եք փորձարկել ձեր հմտությունները, ավելի շատ բան սովորել Համացանցի աշխարհում ձեր իրավունքների մասին և ստեղծել օգտակար խորհուրդներ և գործիքներ, որոնք կարող եք փոխանակել աշխարհի բոլոր երիտասարդների հետ: եթե Մալալայի և Մարթայի նման ունենք փայլուն գաղափարներ, գրելու հրաշալի ունակություններ և նախաձեռնողականություն (տես էջ 15): Դա է պատճառը, որ այս ձեռնարկը կոչվում է Մեր երազած Համացանցը:

Ի՞նչ եք մտածում Համացանցի մասին: Ինչի՞ համար է այն:

Ներկայացրեք Ձեր մտքերը www.webwewant.eu



*Յորիկ, 22 տարեկան դանիացի ուսանող*
*«Համացանցը… մարդկանց հետ հաղորդակցվելու հիմնական միջոցն է, հատկապես՝ գործնական ոլորտում, ինչպես նաև գործընկերություններ ստեղծելու և այլ երկրների դպրոցների հետ գաղափարների փոխանակելու նպատակով»:*

*Շարլոտ, 17 տարեկան ֆրանսիացի ուսանող*
*«Պարզապես մի հարց. կարո՞ղ ենք մենք այսօր ապրել առանց Համացանցի: Անկեղծ ասած՝ ես չեմ կարծում, որ կարող ենք: Մեզ այն պետք է նույնիսկ եղանակը ստուգելու համար: Այն դարձել է մեր կյանքի մասը. ստեղծվել են ծրագրեր, որոնք կարող են կառավարվել ձեր հեռախոսից: Այն ունի դրական և բացասական կողմեր: Դուք կարող եք ստուգել ինչ ուզեք, երբ ուզեք, և դա հրաշալի է»:*





*Թերեզա, 20 տարեկան բժշկական բուհի չեխ ուսանող*
*«Անվտանգ, ոգեշնչող և անսահմանափակ տարածք, որտեղ յուրաքանչյուր ոք կարող է արտահայտել իր կարծիքն ու մտքերը՝ առանց ենթարկվելու այլ անձանց կողմից շահարկումների կամ խիստ քննադատական մեկնաբանությունների (ըստ ձեր երկրում գործող օրենքի)»:*



Ֆլորան, 20 տարեկան դանիացի ուսանող
«Համացանցն արդեն իսկ լավ բան է, և այն նախատեսված է ազատ խոսքի համար: Հետևաբար, եթե նյութն արդեն իսկ կա առցանց, դուք պետք է հնարավորություն ունենաք ներբեռնել այն»:

Իզաբել, 12 տարեկան ավագ դպրոցի դանիացի աշակերտ
«...տեղեկություններ փնտրելու, խաղեր խաղալու և էլ. փոստի»:





Լիվի, 22 տարեկան ուսանող Միացյալ Թագավորությունից
«Համացանցը ինձ հաղորդակցվելու հարցում օգնող հրաշալի գործիք է: Ես ամեն ինչ անում եմ Համացանցով: Ես սովորում եմ, թե ինչպես ինչ-որ բան անել այդ մասին տեսանյութեր դիտելով YouTube-ում: Ես համալսարանում իմ դասերի բոլոր նյութերը կարդում եմ առցանց, քանի որ Համացանցում նյութերը արդիական են»:

Լյուբոշ, 14 տարեկան աշակերտ Սլովակիայից
«Համացանց. մենք ցանկանում ենք բաց և անվտանգ տարածք յուրաքանչյուրի համար»:





Ջոշ, 18 տարեկան ճարտարագիտության ուսանող Միացյալ Թագավորությունից
«Համացանցը միջոց է ընկերների հետ հաղորդակցվելու և հասարակական կյանքով ապրելու, հատկապես՝ Ֆեյսբուքում, ինչպես նաև արագ տեղեկություններ ստանալու համար»:

Իոաննա, 17 տարեկան ավագ դպրոցի հույն աշակերտ
«Համացանցը խճանկարի նման մի բան է: Աշխարհի բոլոր ծայրերում գտնվող մարդիկ իրենց գիտելիքի մի մասնիկն են տեղադրում այնտեղ և այդ եղանակով մարդիկ «կառուցում են» տեղեկություններով լի մի աշխարհ, որն անվերջորեն թարմացվում և լրացվում է, քանի դեռ չի դարձել ճշմարիտ»:



# Բովանդակության ցանկ

**Նախաբան** 3

**Իմ առցանց իրավունքներն ու պարտականությունները**

1.1. Պարզեք ձեր իրավունքներն ու պարտականությունները 6
1.2. Պայմաններն ու նորմերը, հիմնական մարտահրավերը 8
1.3. Երբ ձեր իրավունքներն չեն հարգվում 10

**«Տեղեկույթը գիտելիք չէ». Ալբերտ Էյնշտեյն**

2.1. Քննադատաբար մտածելու ժամանակը 12
2.2. Արժանահավատ համացանցային լրագրողի գործիքակազմը 15
2.3. Տեղադրելուց առաջ մտածեք 17

**Մասնակցություն Համացանցում**

3.1. Գործել, արձագանքել, փոխազդել 19
3.2. Պահպանել սեփական ես-ը Համացանցում 23
3.3. Մասնակցել նախաձեռնողաբար … և պատասխանատվորեն 26

**Կերտեք ձեր ինքնությունը**

4.1. Ներկայացեք աշխարհին 29
4.2. Ինձ, ինքս և ես 31
4.3. Ճշմարտություն և ուրիշ ոչինչ, բացի ճշմարտությունից 33

**Անձնական կյանքի գաղտնիությունը իմ ամենաթանկ ունեցվածքն է**

**5.1. Լինելով անտեսանելի համացանցային աշխարհում 35**
**5.2. Մոռացվելու իրավունք. թվային ոտնահետքի հեռացումը 37**
**5.3. Ցուցադրեք ձեզ բայց ոչ՝ չափից ավելի 40**
**5.4. Իմ և ձեր անձնական կյանքի գաղտնիությունը 42**

**Արվեստագետը ձեր մեջ**

**6.1. Ինչ է հեղինակային իրավունքը 43**
**6.2. Արդյո՞ք դուք տեսահեն եք 45**

**Ի՞նչ սովորեցիք. արդյո՞ք դուք ունեք ցանցի իմաստություն, թե ցանցի թուլություն 47**

**Insafe-ը ձեր երկրում 50**

Լրացուցիչ տեղեկությունների համար տես՝ www.webwewant.eu

# 1.1. Պարզեք ձեր իրավունքներն ու պարտականությունները

«Չկա և ոչ մի իրավունք՝ առանց համապատասխան պարտականությունների» Սեմյուել Թեյլոր Քոլրիջ

**ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ**

Իրավունքը ստեղված է պաշտպանելու անհատներին ու խմբերին անարդարությունից: Միևնույն ժամանակ իրավունքը թույլ է տալիս դառնալ հասարակության պատասխանատու և ակտիվ անդամ, քանի որ այն հիմնված է յուրաքանչյուր անձի և խմբի այլ մարդկանց հանդեպ պատասխանատվության սկզբունքի վրա: Իրավունքը ինքն քեզ և այլ մարդկանց հարգելու համար է ստեղծված, այն ներառում է իր մեջ բարոյական և իրավական պարտավորություններ, որոնք ստանձնում են ժողովուրդները և պետությունները:

Ազատ արտահայտվելու իրավունք

Կրթություն

Անձնական կյանքի գաղտնիություն

Պաշտպանության իրավունք

Տեղեկատվության մատչելիություն

հարգանք

Անձնական անվտանգություն

Սեփականության, ներդրումային իրավունք

Մասնակցություն

Ճշգրիտ տեղեկատվություն

Անվտանգ միջավայր

Մատնանշեք, թե վերոհիշյալ հասկացություններից որոնք են, առցանց իրավունքները և պարտականությունները: Կարո՞ղ են արդյոք դրանք համընկնել: Կարող եք նաև գրի առնել այլ հասկացություններ, որոնք ըստ Ձեզ, առնչվում են Ձեր առցանց իրավունքներին և պարտականություններին:
Ձեր իրավունքների և պարտականությունների մասին համապարփակ տեղեկատվություն ստանալու համար կարող եք ընթերցել ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան՝
http://www.un.org/cyberschoolbus/humanrights/resources/plain.asp

| ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ | ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|
| Արտահայտվելու ազատություն | Այլոց նկատմամբ հարգանք |
| | |
| | |
| | |

[1] Australian Broadcasting Corporation (2000),'Human Rights: What and When' (online), http://www.abc.net.au/civics/rights/what.htm, consulted on 04/01/2013.

Created by European Schoolnet in collaboration with the Insafe Network and with the support of Google, Liberty Global and the European Commission / Creative Commons License by-nc-nd/3.0




Ես 14 տարեկան եմ:
Ինչ առցանց իրավունքներ և պարտականություններ ունեմ ես:

Ես 18 տարեկան եմ:
Արդյոք իմ իրավունքներն ու պարտականությունները տարբեր են ձերից




Կա՞ն արդյոք իրավունքներ, որոնք, ձեր կարծիքով, տարբեր կլինեին Ջոաննայի և Ջոշի համար:
Կա՞ն արդյոք տարբերություններ նրանց պարտականություններում:

| 14 տարեկան | 18 տարեկան |
| --- | --- |
| | |

Որոշ իրավունքներ և պարտականություններ հանդես են գալիս միասին, կան այնպիսիք, որոնք հակասում են իրար:
Մատնանշեք այս հարաբերություններից / հակասություններից մի քանիսը ձեր առցանց իրավունքներում և պարտականություններում և բացատրեք դրանք:

| ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ | | ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
| --- | --- | --- |
| ________ | = | ________ |
| ________ | ≠ | ________ |

Created by European Schoolnet in collaboration with the Insafe Network and with the support of Google, Liberty Global and the European Commission / Creative Commons License by-nc-nd/3.0

# 1.2. Պայմաններն ու նորմերը, հիմնական մարտահրավերը

**Պայմաններն ու նորմերը**

Այն ընդհանուր և հատուկ կարգավորումները, դրույթները, պահանջները, կանոնները, մասնագրերը և չափորոշիչները, որոնք կազմում են համաձայնագրի կամ պայմանագրի բաղկացուցիչ մասը:[2]

Անկասկած պատահել է, որ նշում անեք մի որևէ կայքում մի քառակուսու մեջ՝ դրանով իսկ ձեր համաձայնությունն արտահայտելով այդ կայքի պայմաններին ու նորմերին:
Բայց արդյո՞ք իրականում գիտեք, թե ինչին եք տալիս ձեր համաձայնությունը:

Իրավական տերմիններով հեղեղված տեքստը կարող է անվերջ ու անընթեռնելի թվալ, սակայն քառակուսու մեջ արված Ձեր նշումը ենթարկում է Ձեզ մի շարք պարտականությունների և իրավունքների: Այդ իսկ պատճառով շատ կարևոր է կարդալ և հասկանալ, ինչ է գրված տեքստում:

## Մարտահրավերին ընդառաջ...

Մտավոր սեփականության իրավունքներով պաշտպանվող նյութերի նկատմամբ, ինչպիսիք են լուսանկարներն ու տեսանյութերը,Դուք տալիս եք մեզ թույլտվություն, որը հաշվի է առնում Ձեր կողմից արված անձնական գաղտնիության կարգավորումները՝ մասնավորապես մասնավոր սեփականության իրավունքով պաշտպանվող ցանկացած նյութի հանդեպ, որ տեղադրում եմ Ֆեյսբուքում Դուք տալիս եք մեզ ոչ բացառիկ, փոխանցելի, ենթալիցենզավորման ենթակա, հոնորար չպահանջող ամենուր օգտագործելու լիցենզիա: Մասնավոր սեփականության լիցենզիան դադարում է այն ժամանակ, երբ դուք ջնջում եք Ձեր մասնավոր սեփականության իրավունքով պաշտպանված նյութը կամ ձեր հաշիվը, բացառությամբ այն դեպքերի եթե նախապես այդ նյութերով չեք կիսվել կամ ջնջել:

Հղում. ............................................................

**Q1 Որտեղի՞ց է այս տեքստը (լրացրեք հղումի տողը):**

Q2 Արդյո՞ք համաձայն եք այս պայմաններին և դրույթներին: ☐ այո ☐ ոչ

Q3 Ստորև աղյուսակում կարո՞ղ եք շարադրել ընթեռնելի լեզվով այդ պարբերության «թարգմանությունը»:

[2] BusinessDictionary (2012), ‘Terms and Conditions’ (online), http://www.businessdictionary.com/definition/terms-and-conditions.html, consulted on 20/08/2012.

Created by European Schoolnet in collaboration with the Insafe Network and with the support of Google, Liberty Global and the European Commission / Creative Commons License by-nc-nd/3.0

Գիտե՞ք որ




*Փաստորեն միջին ունակությունների տեր մարդուց կպահանջվի 8 ժամանոց 76 աշխատանքային օր մեկ տարում այցելած յուրաքանչյուր կայքի գաղտնիության քաղաքականությունն ընթերցելու համար: Զարմանալի չէ, որ մարդիկ պարզապես թռուցիկ հայացքով աչքի են անցկացնում այդ էջերը և սեղմում «Համաձայն եմ բոլոր պայմաններին և նորմերին» կոճակը:*[3]

Այժմ, երբ փորձ ենք արել «ջարդել» իրավաբանական լեզվի կոդը, արժի գրի առնել մի քանի «թարգմանություն» հետագա կիրառության համար: Տպեք որևէ մի կայքի պայմաններն ու դրույթները և ամփոփեք հիմնական կետերը:

Գիտե՞ք որ

Կան գործիքներ, որոնք ստեղծվել են բարդ պայմաններն ու նորմերը «թարգմանելու» համար: Ուսումնասիրեք, օրինակ, EULAlyzer-ը:

## «Նկարը կարող է ասել շատ ավելի, քան 1000 բառը»

Այդ իսկ պատճառով հաճախ հաղորդակցվելիս մենք օգտվում ենք խորհրդանիշերից: Որոշեք հետևյալ խորհրդանիշերի իմաստը:



. . . . . . . . . . . . . . . .   . . . . . . . . . . . . . . . .   . . . . . . . . . . . . . . . .   . . . . . . . . . . . . . . . .   . . . . . . . . . . . . . . . .

Այժմ փորձեք նախագծել մի քանի պատկերակներ, որոնք կխորհրդանշեն այն հիմնական կետերը, որոնք ակնկալում եք գտնել որևէ կայքի պայմաններում ու դրույթներում:

Անձնական կյանքի գաղտնիություն   . . . . . . . . . . . .   . . . . . . . . . . . .   . . . . . . . . . . . .   . . . . . . . . . . . .

[3] The Atlantic (2012), 'Reading the Privacy Policies You Encounter in a Year Would Take 76 Working Days' (online), http://www.theatlantic.com/technology/archive/2012/03/reading-the-privacy-policies-you-encounter-in-a-year-would-take-76-work-days/253851/, consulted on 20/08/2012.

Created by European Schoolnet in collaboration with the Insafe Network and with the support of Google, Liberty Global and the European Commission / Creative Commons License by-nc-nd/3.0

# 1.3. Երբ ձեր իրավունքները չեն հարգում...

**Խախտում**

Գործողություն, որը թույլատրված չէ օրենքով: Խախտումը անպայման չէ, որ հանցագործություն լինի.[4] Իրավաբանական եզրերով հաճախ օգտագործվում է իրավախախտում բառը:[5]

Ձեր առցանց իրավունքները կարող են խախտվել տարբեր եղանակներով՝ օրինակ, կարող է լինել համացանցային էթիկետի խախտում, այլ դեպքերում կարող է տեղի ունենալ օրենքի խախտում, որը կարող է հանգեցնել քրեական հետապնդման:

Մատնանշեք մի քանի օրինակներ, երբ կարող են խախտվել կամ ոտնահարվել ձեր առցանց իրավունքները:

1 *Սոցիալական ցանցի Ձեր անձնական էջի վրա արվել է անպարկեշտ մեկնաբանություն*
2 *անպարկեշտ լեզվով ...*
3
4
5




*«Մի անգամ ես առցանց մի կիրառական ծրագիր էի գնել և իմ հաշվից շարունակաբար գումար էր գանձվում : Մայրս շատ էր բարկացել, սակայն կարողացավ իմ ողջ գումարը հետ բերել»:*

Ո՞ր իրավունքներն են խախտվել վերոհիշյալ օրինակում:

Արդյո՞ք տղան կատարել է իր պարտականությունները: Ինչպե՞ս կարող էր մայրիկը լուծել խնդիրը: Դուք կիմանաք նման իրավիճակի մասին և որտե՞ղ:

Որտե՞ղ կարելի է ահազանգել մեր իրավունքների խախտումների մասին:

Որո՞նք են լավագույն լուծումները, ձեր թվարկված խախտումներից յուրաքանչյուրի դեպքում: Քննարկեք բոլոր հնարավոր լուծումները և գրի առեք, թե որն է ձեր կարծիքով լավագույնը:

1 *Խոսել մեկնաբանությունը գրած անձի հետ, անհրաժեշտության*
2 *դեպքում արգելափակել նրա հաշիվը ...*
3
4
5

[4] Merriam-Webster (2012), 'Violation' (online), http://www.learnersdictionary.com/search/violation, consulted on 18/01/2013.
[5] 'Infringement' (online), http://www.learnersdictionary.com/search/infringement, consulted on 18/01/2013.

Created by European Schoolnet in collaboration with the Insafe Network and with the support of Google, Liberty Global and the European Commission / Creative Commons License by-nc-nd/3.0

Արդյո՞ք հետևյալ արարքները Ձեր երկրում խախտում են:
Ի՞նչ հետևանք կարող է ունենալ յուրաքանչյուր խախտումը:

Լուսանկարներում մարդկանց սխալ դրոշմելը
☐ ԱՅՈ ☐ ՈՉ

Երբ լուսանկարում և ներբեռնում եք որևէ երաժշտի կատարում, մինչդեռ տոմսի վրա նշված է, որ տեսագրում չի թույլատրվում:
☐ ԱՅՈ ☐ ՈՉ

Կայքում տեղադրում եք հեղինակային իրավունքով պաշտպանված մի մշակութային պատկերակ (icon) (լոգո, խորհրդանիշ, դեմք և այլն, որ հայտնի է յուրաքանչյուրին)՝ նշելով կամ չնշելով սեփականատիրոջը:
☐ ԱՅՈ ☐ ՈՉ

Ինչ-որ մեկին ձերբակալել են հեռախոսային հաքերության համար, սակայն չեն դատապարտել: Այդուհանդերձ դուք ձեր անձնական էջում գրում եք «X-ը հեռախոսային հաքեր է!!!!!»
☐ ԱՅՈ ☐ ՈՉ

Դուք բացում եք անձնական էջ Ֆեյսբուքում առանց նշելու ձեր իրական անունը:
☐ ԱՅՈ ☐ ՈՉ

Ձեր քաղաքում անկարգություններ են տեղի ունենում: Դուք չեք մասնակցում, սակայն ձեր անձնական էջում գրում եք «Չրաշալի լուր. վերջապես մեր քաղաքում անկարգություններ են տեղի ունենում»:
☐ ԱՅՈ ☐ ՈՉ

Ուսուցիչը դասարանի խմբային նկարը տեղադրում է սոցիալական ցանցում՝ չունենալով յուրաքանչյուր ծնողի համաձայնությունը:
☐ ԱՅՈ ☐ ՈՉ

Մի 15 տարեկան աղջնակ ինքն իրեն լուսանկարում է մերկ և լուսանկարն ուղարկում ընկերոջը:
☐ ԱՅՈ ☐ ՈՉ

Created by European Schoolnet in collaboration with the Insafe Network and with the support of Google, Liberty Global and the European Commission / Creative Commons License by-nc-nd/3.0

# 2.1. Քննադատաբար մտածելու ժամանակը

**Տեղեկույթ**

Ճշգրիտ տեղեկություններ և տվյալներ (1), որոնք ստուգված են և արդիական, (2) կոնկրետ և ինչ որ նպատակի ծառայող, (3) հանդես են գալիս այդ տեղեկությունները մեկնաբանող ենթատեքստում, և (4) որոնք կխորացնեն ընկալումը և կնվազեցնեն անորոշությունը: [6]

### Տեղեկություններ՝ Ստանալ թե տրամադրել



Ի՞նչ տեղեկություն եք թողնում Համացանցում:
Ի՞նչ տեղեկություն եք վերցնում Համացանցից:

*Համացանցը երկկողմանի փողոց է՝ և երիտասարդները պետք է սովորեն ճիշտ երթևեկել: Համացանցն ինձ օգնում է տնային աշխատանքները կատարել, այն տեղեկությունների շտեմարան է և երբեմն ինֆորմացիան ավելին է, քան պահանջվում է: Մի անգամ ես հասկացա, որ իմ այցելած կայքում կեղծ տեղեկատվություն էր տեղադրված, այդ կայքից օգտվելը ժամանակի վատնում էր:*







*Ես երաժշտական խմբում եմ, ցանցի միջոցով մենք տեղեկություններ ենք տարածում մեր կատարումների մասին, վերբեռնում ենք նոր տեսագրություններ: Վստահ չեմ, որ շատ մարդիկ են նայում դրանք, բայց միևնույն է համացանցը շատ լավ միջոց է նորությունները հեշտությամբ տեղ հասցնելու համար:*

*Այն շատ օգտակար է ինչ-որ բան գնելու համար: Ես հագուստ եմ փնտրում խանութներում, իսկ հետո առցանց դրանք ավելի էժան եմ գնում:*

*Համացանցում որևէ գործողություն կատարելու համար շատ տվյալներ են պահանջում: Ես այդքան էլ հակված չեմ տրամադրել իմ հասցեն և հեռախոսահամարը: Կարծում եմ, որ էլ փոստի հասցեն տրամադրելը նորմալ է, և ես բացել եմ մի քանիսը փոստաղբից խուսափելու համար:*




Created by European Schoolnet in collaboration with the Insafe Network and with the support of Google, Liberty Global and the European Commission / Creative Commons License by-nc-nd/3.0

[6] BusinessDictionary (2012), ''Information' (online), http://www.businessdictionary.com/definition/information.html, consulted on 20/08/2012.

Ի՞նչ տեղեկություններ ենք **ստանում** համացանցից:

Ի՞նչ տեղեկություններ ենք **թողնում** համացանցում:

ԻՐԱԿԱՆ թե՞ ԿԵՂԾ: Մենք բոլորս կարծում ենք, թե չենք խաբվի կեղծիքով: Սակայն իրականությունն այն է, որ կեղծարարները կատարելագործում են իրենց մեթոդները, իսկ մենք միշտ չէ, որ ավելի իմաստուն ենք դառնում: Որքա՜ն հաճախ ենք տեսնում, թե ինչպես մի դուրս լողացող պատուհան մեզ տեղեկացնում է, որ առաջին մրցանակն ենք շահել կամ մեզ հատուկ ընտրել են ինչ-որ բանի համար:

**Միշտ չէ, որ հեշտությամբ կարելի է բացահայտել կեղծիքը (scam) որքանո՞վ է դա ձեզ հաջողվում:**
**Նայեք ստորև կայքերին. կարող եք մատնանշել, թե դրանցից որո՞նք են կեղծ:**













Կարող եք վարժվել այցելելով
https://www.phish-no-phish.com/staying-safe-online/quiz/ և պատասխանելով հարցերին՝ տեսնելու, թե որքան արագ կարող եք բացահայտել կեղծ կայքերը:[7]

Created by European Schoolnet in collaboration with the Insafe Network and with the support of Google, Liberty Global and the European Commission / Creative Commons License by-nc-nd/3.0

[7] Symantec (2012), ‘Staying Safe Online’ (online), https://www.phish-no-phish.com/staying-safe-online/quiz/, consulted on 10/09/2012.

# Ինչպե՞ս ենք մենք իմանում, որ առցանց մեր գտածն արժանահավատ է և ճշմարիտ:

**Գիտե՞ք որ**

ՄԹ-ում 12-15 տարեկան երեխաների 33%-ն ասում է, որ եթե իրենք ինչ-որ բան փնտրեն, փնտրվող բոլոր արդյունքները պետք է պարունակեն ճշգրիտ տեղեկություններ:[8]

Կարո՞ղ եք թվարկել 5 կանոն, որոնք մեզ կօգնեն Համացանցում տեղեկությունները արդյունավետ որոնել:

1
2
3
4
5

## Անվտանգ ճամփորդություն ցանցում

Ոչ հավաստի տեղեկությունը միակ ռիսկը չէ Համացանցում: Թվարկեք Ձեր իմացած այլ ռիսկերը: Ստորև քառակուսիներում կարող եք թվարկել այլ ռիսկեր: Առաջին քառակուսին լրացված է որպես օրինակ:

| | | |
|---|---|---|
| Վիրուսներ | | |
| | | |

Մեկ անգամ ևս դիտարկեք ձեր մատնանշած ռիսկերը և 1-ից 6 բալանոց սանդղակում դասակարգեք դրանք, 1-ում նշելով այն ռիսկերը, որոնք առավել մտահոգիչ են Ձեզ համար: Հարցրեք այլ մարդկանց՝ արդյոք նրանք համաձայն են ձեր ընտրած ռիսկերի ցանկի և համապատասխան դասակարգման հետ:

Created by European Schoolnet in collaboration with the Insafe Network and with the support of Google, Liberty Global and the European Commission / Creative Commons License by-nc-nd/3.0

[8] Ofcom (2012), ‘Children and Parents : Media Use and Attitudes Report’ (online), http://stakeholders.ofcom.org.uk/binaries/research/media-literacy/oct2012/main.pdf, p.104 consulted on 10/09/2012.

# Պատասխանատու համացանցային լրագրողի գործիքակազմը

**Ժուռնալիստիկա** – որևէ լրատվամիջոցի համար ռեպորտաժ պատրաստելու, լուսանկարելու, նորությունները խմբագրելու մասնագիտությունը կամ պրակտիկան: [9]

Բլոգները քաղաքացիների համար հրաշալի գործիք են դարձել իրադարձությունների անմիջական ներկայացման: Նրանք կարող են հարթակ հանդիսանալ երեխաների և երիտասարդների համար ազդելու հանրային կարծիքի վրա: Դիտարկենք հետևյալ երկու օրինակները:

**1**

*«Պակիստանի Սուոթ հովտում թալիբ ահաբեկիչը կրակել և վիրավորել էր 14 ամյա կրթության ջատագով Մալալա Յուսաֆզաիին ՝համարելով նրա աշխատանքը պղծություն:*

*Վաշինգտոն Փոստ, 10/09/2012* [10]

Փնտրեք Մալալա Յուսաֆզաիի պատմությունը Համացանցում:
Նկարագրեք, թե ինչ է արել Մալալան և որոնք էին նրա գործողությունների արդյունքները:

Ի՞նչ էր արել Մալալան:

Նրա գործողությունների արդյունքները:

Ահա և մեկ ուրիշ օրինակ, այս անգամ 9 տարեկան բլոգերի:

**2**

*«Այս տարվա սկզբին իննամյա աշակերտ Մարթա Պեյնը՝ Շոտլանդիայի Լոչգիլպեդ քաղաքից, հայտնվեց թերթերի գլխագրերում, երբ նրա դպրոցական ճաշերի մասին բլոգն «արգելվեց» տեղական խորհրդի կողմից,… »*

*Սառա Ռեյնի, «Թելեգրաֆ», 2/12/2012* [11]

Ի՞նչ էր արել Մարթան և ինչպես: Որո՞նք էին նրա գործողությունների արդյունքները:

Ի՞նչ էր արել Մարթան:

Նրա գործողությունների արդյունքները:

Որո՞նք էին տեղեկատվության ամենաարժանահավատ աղբյուրները, որ դուք կարողացաք գտնել Մալալայի և Մարթայի վերաբերյալ և ինչի՞ց ելնելով որոշեցիք, որ այդ աղբյուրներն արժանահավատ են:

---

[9] The Free Dictionary (2012), ‘Journalism’ (online), http://www.thefreedictionary.com/journalism, consulted on 21/12/2012.
[10] Khazan, O. (2012), ‘Interview with 14-year-old Malala Yousafzai who was shot by Taliban (online), http://www.washingtonpost.com/blogs, consulted on 10/09/2012.
[11] Payne, M. (2012), ‘Martha Payne: diary of a girl who fed the starving’ (online), http://www.telegraph.co.uk/news/worldnews, consulted on 10/09/2012.

Created by European Schoolnet in collaboration with the Insafe Network and with the support of Google, Liberty Global and the European Commission / Creative Commons License by-nc-nd/3.0

Ստորև քառակուսու մեջ գրեք այն 5 «գործիքները», որոնք կարծում եք Մալալան և Մարթան օգտագործել էին իրենց բլոգն արժանահավատ և ուժեղ դարձնելու համար:

Համաձայն ե՞ք ձեզ տրամադրված առաջին գործիքի հետ:

1 *Նրանք խոսում են անձնական փորձառության մասին օբյեկտիվորեն, սակայն առանց դրանից սենսացիա սարքելու:*

2

3

4

5

Այժմ մտածեք, թե ի՞նչ կարող է անել համացանցային լրագրողը, որ չի կարող անել ոչ համացանցային լրագրողը:

Ի՞նչ կասեք հակառակի մասին: Կա՞ն արդյոք բաներ, որ ոչ համացանցային լրագրողը կարող է անել, մինչդեռ համացանցային լրագրողը չի կարող: (օրինակ՝ հեղինակային իրավունք, որակի հսկողություն, տարածում,...)

| Համացանցային լրագրողը **Կարող է** | Ոչ համացանցային լրագրողը **Կարող է** |
|---|---|
| | |

Եվ Մալալան և Մարթան բարձրաձայնել էին իրենց վերաբերող հարցերը: Այժմ փորձեք 10 տողանոց կարճ տեղեկատվական բլոգ գրել այն մասին, թե որ ռիսկն եք համարում ամենավտանգավորը Անվտանգ ճամփորդություն ցանց գլխում, էջ 14: Ինչու՞ պետք է մենք բոլորս մտահոգվենք և ինչ կարելի է անել այդ ռիսկը նվազեցնելու համար:

Սկզբից ստուգեք փաստերը... Հետո հարցրեք ձեր ընկերներին՝ արդյոք նրանք ձեր գրածը հստակ և արժանահավատ են համարում: Վերբեռնեք ձեր բլոգը այստեղ՝ www.webwewant.eu. Փորձեք նաև գնահատել մեր կայքում հրապարակված այլ բլոգները:

Created by European Schoolnet in collaboration with the Insafe Network and with the support of Google, Liberty Global and the European Commission / Creative Commons License by-nc-nd/3.0

# 2.3. Տեղադրելուց առաջ մտածեք

Ազատ արտահայտվելու իրավունքը

Գրավոր և բանավոր խոսքի, ինչպես նաև հաղորդակցության այլ միջոցներով ձեր գաղափարներն ու կարծիքներն արտահայտելու իրավունքը, որը կեղծ կամ ապակողմնորոշող հայտարարություններով դիտավորյալ չի վնասում այլոց նկարագրին և/կամ հեղինակությանը: [12]

Դուք տեղադրում եք հանգստյան օրերին տեղի ունեցած երեկույթի լուսանկարները սոցիալական ցանցում: Ո՞ր նկարներն եք բեռնում և ձեր ընկերներից ում եք նշում:



▶Նախնական տեղեկություններ. Էմին ձեր լավագույն ընկերներից է: Նա Համացանցից չի օգտվում նույնքան հաճախ, որքան որ դուք: Էմին մասնակցում է դպրոցական թատերական խմբակին և պատրաստվում է ունկնդրության հեռուստատեսային շոուի համար:

▶Թվիթերի անուն. @amy_singsdances

▶Ձգտում է. Օգտագործել իր տաղանդը մյուզիքլներում/հեռուստատեսային շոուներում:

▶Անձնական հատկանիշներ. Կենսուրախ, հոգատար, զգայուն. հավանաբար կլսի ձեզ, եթե զրուցակցի կարիք ունեք:

▶Սիրում է. Երգել, պարել, ուտել պիրիպիրի հավիկներ և շփվել ընկերների հետ:



▶Նախնական տեղեկություններ. . Այդանը ձեր լավագույն ընկերն է:Դուք իրար ճանաչում եք այն ժամանակվանից, երբ դեռ երեխա էիր: Այդանը սիրում է երաժշտությունը և շատ ժամանակ ծախսում նոր ձայնագրություններ անելու և երաժշտական ամպի (soundcloud) միջոցով մարդկանց արձագանքներն ստանալու վրա:

▶Թվիթերի անուն:.musicandaidan

▶Ձգտում է: Դառնալ երաժշտության ուսուցիչ:

▶Անձնական հատկանիշներ. Այդանը չի կարողանում զսպել իրեն և չասել վատ բառեր: 64.Նա արագ է հուսահատվում, սակայն ոգևորվում է, երբ երաժշտությամբ է զբաղվում:

▶Սիրում է: Երաժշտություն գրել, երաժշտություն լսել, երաժշտություն գնել, գնալ երաժշտական փառատոնների:.



▶Նախնական տեղեկություններ. Սեմը չբացահայտված հանճար է: Նա դպրոցում մի դասարան առաջ է անցել իր մաթեմատիկական զարմանալի ունակությունների շնորհիվ: Նա շատ է սիրում իր ընկերներին և սիրում է ամեն ինչին մասնակցել:

▶Թվիթերի անուն. @sexy_sam _can

▶Ձգտում է: Հասնել իր նպատակներին, բայց ամեն ինչ անել սիրով:

▶Անձնական հատկանիշներ. Սեմն ամեն ինչ շատ արագ է անում և հաճախ չի մտածում հետևանքների մասին: Քանի որ հումորի լավ զգացում ունի, նրա հետ շփումը բազմաթիվ ժպիտների առիթ է դառնում:

▶Սիրում է. Համարյա ամեն ինչ:



▶Նախնական տեղեկություններ. Նեյթը գիրք կրծող է: Նրա ընտանիքը շատ պահպանողական է և շատ աչալուրջ հետևում է նրա ուսմանը: Նա հազվադեպ է երեկույթների գնում և կենտրոնացած է իր քննությունների վրա: Բայց երբ գնում է, իրեն շատ «ազատ է զգում»:

▶Թվիթերի անուն. Չի օգտագործում:

▶Ձգտում է: Դառնալ իրավաբան:Նեյթը սիրում է թանկարժեք հագուստ և ուզում է ունենալ լավ վարձատրվող աշխատանք, որպեսզի կարողանա գնել այդ հանգուստը:

▶Անձնական հատկանիշներ. Նեյթը բավական ամաչկոտ է:

▶Սիրում է. Դասերից դուրս ժամանակն անցկացնել աղջիկների շրջապատում և չի բացառվում ոգելից խմիչքների օգտագործումը:

*Ի՞նչ կարող էր տեղի ունենալ շաբաթ-կիրակի: Ընկերներից ոմանք կարող են ընկճվել իրենց լուսանկարները հանկարծ Համացանցում տեսնելիս, մանավանդ երբ իրենց չէին հարցրել այդ նկարները տեղադրելուց առաջ:*

*Արդյո՞ք ընկերներից ոմանք ավելի խոցելի են, քան մյուսները: Ո՞վ է ընկերներից ավելի տուժում առցանց բացահայտումների հարցում:*

[12] BusinessDictionary.com (2013), 'Freedom of expression' (online), http://www.businessdictionary.com/definition/freedom-of-expression.html, consulted on 21/12/2012.

Created by European Schoolnet in collaboration with the Insafe Network and with the support of Google, Liberty Global and the European Commission / Creative Commons License by-nc-nd/3.0

Ուշադիր ընթերցեք բոլորի անձնական էջերը: Եթե նրանք դրոշմվեն անհարմար լուսանկարում, ապա ո՞վ ավելի շատ բացասական արձագանք կստանար:

**Նախնական տեղեկություններ.** Սաշը դպրոցը փոխելուց հետո ձեր խմբին է միացել: Նա առցանց հետապնդումների է ենթարկվել և շատ մտահոգ է իր թվային հետքով:

**Թվիթերի անուն.** Սաշն ապաակտիվացրել է իր թվիթերի հաշիվը:

**Ձգտում է.** Աշխատել կառավարությունում՝ օժանդակելու հետապնդումների դեմ բարեգործական նախաձեռնություններին:

**Անձնական հատկանիշներ.** Սաշն ամաչկոտ չէ, սակայն դժվարությամբ է նոր մարդկանց վստահում: Նա մոտակա դպրոցի իր հասակակիցների կամավոր աջակիցն է դարձել:

**Սիրում է.** Կամավորական աշխատանք և ճամփորդություններ:

**Նախնական տեղեկություններ.** Սաբինը սիրում է նորաձևություն և բլոգ է ստեղծել այդ թեմային նվիրված: Սաբինի բլոգը ճանաչում է ստացել և նա գումար է վաստակում գովազդից:

**Թվիթերի անուն.** @sabinelovesstyle

**Ձգտում է:** Աշխատել նորաձևությունը լուսաբանող լրագրող:

**Անձնական հատկանիշներ.** Սաբինն ունի ընկերների մի մեծ ցանց, հիմնականում անծինք, ում նա հանդիպել է բլոգի միջոցով: Նա հազվադեպ է հանդիպում իր ընկերներին ցանցից դուրս:

**Սիրում է.** Նոր ընկերներ ձեռք բերել և ժամանակ անցկացնել իր ընկերոջ հետ:

**Նախնական տեղեկություններ.** Մաքսը խմբի գիտակն է տեխնիկայի հարցում: Տարիներ շարունակ նա ծրագրավորմամբ է զբաղվում:

**Թվիթերի անուն.** @javaMAXpython

**Ձգտում է:** Ստեղծել մեծ պահանջարկ ունեցող առցանց խաղ:

**Անձնական հատկանիշներ.** Հրաշալի ընկեր է և խորհրդատու՝ առցանց և ցանցից դուրս: Հաճախ պաշտպանում է մարդկանց սոցցանցերում, եթե կարծում է, որ նրանց հետապնդում են:

**Սիրում է.** իր ժամանակի մեծ մասը անցկացնում է Համացանցում, իրական կյանքում սիրում է ֆուտբոլ և լավ խոհարար է:

**Նախնական տեղեկություններ:** Մարկուսը խմբի կատակասերն է: Նա ռեգբի է խաղում և սիրում է կատակներ անել իր ընկերների հետ:

**Թվիթերի անուն:** @mrmarcuszzz

**Ձգտում է:** Մարկուսը չի մտածում վաղվա մասին:

**Անձնական հատկանիշներ:** Մարկուսը զվարճանքի կենտրոնն է, սակայն երբեմն չափն անցնում է, հատկապես՝ առցանց: Նա չի կարողանում իրերին նայել այլոց տեսանկյունից:

**Սիրում է:** Ամեն տեսակի սպորտ և լինել իր ընկերների հետ:



*Կարծում եմ, որ դու պետք է լինես միակ որոշողը՝ լուսանկարներ տեղադրել սոցիալական ցանցերում, թե՝ ոչ:*

*Կախված է լուսանկարից, սակայն ես չէի ուզենա, որպեսզի անծանոթները դրոշմեն իմ լուսանկերները:*



Արտահայտվելու ազատությունը շատ կարևոր իրավունք է: Այժմ մեկ անգամ ևս ընթերցենք Մարդու իրավունքների միջազգային կոնվենցիան http://www.un.org/en/documents/udhr/index.shtml.

Ո՞ր իրավունքները պետք է հատկապես աչալրջորեն պաշտպանել Համացանցից օգտվելիս:

Այժմ կազմեք ձեր անձնական էջը, ինչպես վերը նշվածները, որը ձեր ընկերները կկարողանային կազմել ձեր մասին օգտվելով ձեր թվային ոտնահետքից **կամ**

Գրեք ձեր ընկերներից մեկի անձնական էջը՝ հիմնվելով նրանց թվային ոտնահետքերի վրա:

Created by European Schoolnet in collaboration with the Insafe Network and with the support of Google, Liberty Global and the European Commission / Creative Commons License by-nc-nd/3.0

# 3.1. Գործել, արձագանքել, փոխազդել…

«Նայել, թե կյանքն ինչպես է կողքովդ անցնում, միշտ ատելի է եղել ինձ համար: Ինչ եմ ես, եթե ոչնչի չեմ մասնակցում»:
«Մասնակցում եմ, հետևաբար կամ» Անտուան դը Սենտ Էքզյուպերի («Փոքրիկ իշխան»-ի հեղինակը)

**Մասնակցություն** → խմբի գործունեությանը ընդգրկվելու և կիսվելու, ինֆորմացիա տարածելու կարողությունը:[13]

Ինչպե՞ս եք ԴՈՒՔ մասնակցում «խմբի գործունեությանը»:




Արդյո՞ք մարդիկ այս բոլոր միջոցներով նույն կերպ են հաղորդակցվում:

Ես օգտագործում եմ SMS-ներն ամեն օր՝ իմ կոնտակտների ցանկում ներառված անձանց կարճ հաղորդագրություններ ուղարկելու համար: Կարճ հաղորդագրությունը ուրախություն է պատճառում մարդկանց, նաև օգտակար է տարբեր իրավիճակներում, օրինակ՝ երբ տեղեկացնում եք, որ պիտի ուշանաք:







Ես օգտվում եմ Թվիթերից, որովհետև երբ Ֆեյսբուքում թարմացնում ես ստատուսներդ, քո էջը լցվում է: Թվիթերը պակաս անհատական է, քան ակնթարթային հաղորդագրությունները և ես օգտագործում են այն մարդկանց պարագայում, ում չեմ ուզում տալ իմ հեռախոսահամարը:

[13] WordNet Search (2012), ‘Participation’ (online) http://wordnetweb.princeton.edu/perl/webwn?s=participation, consulted on 10/09/2012.

Created by European Schoolnet in collaboration with the Insafe Network and with the support of Google, Liberty Global and the European Commission / Creative Commons License by-nc-nd/3.0

Դիտարկեք ստորև վարժությունները: Նկարեք նախորդ էջից մեկ կամ երկու պատկերակ՝ ցուցադրելու, թե ինչ ծառայությունից կօգտվեիք այդ իրավիճակներից յուրաքանչյուրում:

1. Կապվում եք մի ընկերության հետ, որտեղ ցանկանում եք մասնակցել աշխատանքային փորձ ձեռք բերելու համար նախատեսված մի ծրագրի:

2. Ցանկանում եք ձեր ընկերներին տեղեկացնել, որ վերադարձել եք տուն հեռու տեղից:

3. Փորձում եք հաշտվել մի անձի հետ, ում հետ վիճաբանել եք:

4. Տարածում եք ամառվա ընթացքում կատարված ճամփորդության լուսանկարները:

5. Անձնական բնույթի քննարկումներ եք ունենում մոտ ընկերների հետ:

6. Մասնակցում եք առցանց քննարկումների մի թեմայի վերաբերյալ, որը ձեզ սրտամոտ է:

7. Բողոքում եք խանութին այնտեղից գնված ապրանքի վատ որակի վերաբերյալ:

8. Մի գաղտնի հարց եք քննարկում առցանց փաստաբանական ծառայության հետ:

9. Շփվում եք ընտանիքի այն անդամների հետ, որոնք հեռու են ապրում:

Գրեք «դեմ առ դեմ» այն իրավիճակների կողքին, որոնք, ըստ ձեզ, ավելի լավ կանցնեին դեմ առ դեմ փոխազդեցությամբ:

Ինչու՞ դեմ առ դեմն ավելի ճիշտ կլիներ:

Created by European Schoolnet in collaboration with the Insafe Network and with the support of Google, Liberty Global and the European Commission / Creative Commons License by-nc-nd/3.0

Ստորև ազատ թողնված հատվածում նշել 5 եղանակ, որով դեմ առ դեմ և առցանց փոխազդեցությունը տարբերվում են: Առաջին օրինակը տրված է:

1 *Երբ դուք փոխազդում եք շատ մարդկանց հետ, նրանք բոլորը չեն կարող միաժամանակ խոսել դեմ առ դեմ իրավիճակում, սակայն բոլորը միաժամանակ կարող են մեկնաբանություն անել, երբ առցանց եք, օրինակ՝ բլոգում կամ ֆորումում:*

2

3

4

5

Նույնիսկ այն դեպքում, երբ մանրակրկիտ ձևով ընտրել եք ձեր հաղորդակցության ուղին, հաղորդագրությունները կարող են տարընթերցումների առիթ հանդիսանալ:




Քանի որ դուք չեք կարող առցանց տեսնել այն անձի դեմքի արտահայտությունը կամ մարմնի լեզուն (եթե իհարկե ցանցային տեսախցիկը միացած չէ), հորինվել է սմայլին: Մենք ծանոթ ենք այնպիսի խորհրդանիշերի, ինչպիսիք են ☺ («ուրախը») և ☹ («տխուրը») սակայն ամբողջ աշխարհը դրանք չի օգտագործում: Կարող եք ընթերցել ստորև բերված ճապոնական էմոթիկոնները:

| | |
|---|---|
| **(^_^)** | **(*^.^*)** |
| **(T_T)** | **\(^_^)/** |
| **(o.o)** | **(>_<)>** |
| **(^_-)** | **(^o^)** |
| **m(_ _)m** | **d(^_^)b** |

Այժմ այցելեք www.webwewant.eu տեսնելու ավելի մեծ թվով էմոթիկոններ և էջի ներքևում նայեք, թե այդ ճապոնական էպոթիկոններն իրականում ինչ են նշանակում:

Created by European Schoolnet in collaboration with the Insafe Network and with the support of Google, Liberty Global and the European Commission / Creative Commons License by-nc-nd/3.0

Սմայլիներն ու էմոթիկոնները կարող են օգնել ձեզ հստակեցնելու Համացանցում ձեր ասածի իմաստը: Այժմ մտածեք, թե ինչպես կարող եք հստակեցնել ձեր ասելիքը, երբ Համացանցից դուրս եք հաղորդակցվում: Ի՞նչ «գործիքներ» (օրինակ՝ ժեստերը, ինտոնացիան և այլն) կարող եք օգտագործել արտահայտելու հետևյալն իրական կյանքում:

| *Բարեկամական վերաբերմունք / հաճույք* | *Հումոր* |
| --- | --- |
| | |

| *Ընկերական կատակներ* | *Սրտնեղում / բարկություն* |
| --- | --- |
| | |

Եղել ե՞ք առցանց կամ ցանցից դուրս իրավիճակում, երբ ձեր ասածի իմաստը սխալ է մեկնաբանվել: Նկարագրեք այդ իրավիճակը և նշեք, թե ինչպես եք լուծել այն:

Կարո՞ղ եք տալ 5 օգտակար խորհուրդներ, որոնք կօգնեն խուսափելու տարընթերցումներից առցանց: Ուղարկեք ձեր օգտակար խորհուրդները www.webwewant.eu

1
2
3
4
5

Պատասխաններ՝ ուրախ, տխուր (լացելիս), զարմացած, աչքով անել, ներողություն հայցել (խոնարհվել), ամաչել, ուռռա գոռալ (ձեռքերն օդում), անհանգստացած, երգել կամ բարձրաձայն ծիծաղել, երաժշտություն լսել. ականջակալները հագած:

Created by European Schoolnet in collaboration with the Insafe Network and with the support of Google, Liberty Global and the European Commission / Creative Commons License by-nc-nd/3.0

# 3.2. Պահպանել սեփական ես-ն առցանց

**Արժեքներ** → Վարքագծի սկզբունքները կամ չափանիշները, սեփական դատողությունն այն մասին, թե ինչն է կարևոր կյանքում:[14]

Ո՞րնք են ձեր արժեքները համացանցում և համացանցից դուրս:




*Իրոք ես Ֆեյսբուքում ասում եմ բաներ, որ չէի ասի ինչ-որ մեկի երեսին. առցանց ավելի հեշտ է անմիջական լինել և կարծում եմ, որ երբեմն դա որոշ մարդկանց վշտացնում է:*

**Գիտե՞ք, որ**

*«Չայլդնեթ ինթերնեյշնլի» վերջերս անցկացված հարցման համաձայն՝ երիտասարդների 45% գտնում են, որ իրենց համացանցային վարքագիծը չի տարբերվում սովորականից:* [15]




Ո՞րնք են ձեր արժեքները համացանցում և համացանցից դուրս: Ստորև ներկայացված բառերի շտեմարանից ընտրեք բառեր՝ նկարագրելու ձեր անձնական հատկանիշները և արժեքները: Ո՞րն է ձեր «իրական ես-ը»՝ համացանցից դուրսը, թե ցանցինը: Գրեք, թե ինչ ածականներ են ձեզ առավել ճիշտ նկարագրում «առցանց» կամ «ցանցից դուրս», կամ երկուսում էլ, եթե տվյալ ածականը ձեզ լավագույն նկարագրում է և առցանց և ցանցից դուրս: Կարող եք ինքներդ ավելացնել այլ ածականներ, եթե ցանկանում եք:

**Առցանց** | **Ցանցից դուրս**



Համակերպվող Հաստատակամ
Խղճով Համարձակ Ստեղծարար
Դաժան Ցինիկ Պաշտպանվող
Անազնիվ Կամազուրկ Էքստրավերտ
Ազնիվ Զգացմունքային Ինտրավերտ
Բարկացկոտ Հավատարիմ Մռայլ
Ինքնահավան Բացասական
Նյարդային Ոչ կոմֆորմիստ
Հոգատար Ենթարկվող Լայնախոհ
Լավատես Պարանոիկ Հոռետես
Դրական Ապստամբ Արկածախնդիր
Խիզախ Ինքնավստահ Եսասեր
Զգայուն Լուրջ Անկեղծ Ծիփող
Ամաչկոտ Հանդուրժող

[14] Oxford Dictionaries (2012), 'Value' (online), http://oxforddictionaries.com/definition/english/value, consulted on 8/11/2012.
[15] For more information, please consult: http://www.youthigfproject.com/2012baku.html.

Created by European Schoolnet in collaboration with the Insafe Network and with the support of Google, Liberty Global and the European Commission / Creative Commons License by-nc-nd/3.0

Ո՞ր միջավայրում է՝ առցանց թե ցանցից դուրս, ձեր կարծիքով ավելի հեշտ «պահպանել սեփական ես-ը»:

| Առցանց | Ցանցից դուրս | Երկուսում էլ | Ոչ մեկում |
| --- | --- | --- | --- |
| ☐ | ☐ | ☐ | ☐ |

**Իրական կյանքի ձեր արժեքները համացանց բերելը կարող է լուրջ մարտահրավեր լինել:** Եկեք դիտարկենք մի քանի օրինակ, որտեղ առողջ դատողությունը և դրական սկզբունքները մոռացվում են համացանցում: Կարո՞ղ եք գրել այս եզրերից յուրաքանչյուրի սահմանումը: Եթե դրանք գտնեք որևէ աղբյուրից, մի մոռացեք մատնանշել այդ աղբյուրը:

Թրոլինգ.

Հետապնդում

Հոգու հետ խաղալ

Սեքստինգ

Ֆրեյփինգ

**Համացանցի մութ կողմերը.** Դիտարկեք ստորև նշված իրավիճակները: Կարո՞ղ եք նկարագրել, թե որն է խնդրի բուն պատճառը: Նկարագրեք խնդրի լուծումը:




*Ինչ որ ասում են առցանց պետք է լինի գաղտնի, բայց ոչ՝ այս դպրոցում: Այստեղ ցանկացած բան, որ գրում եք առցանց, ցանկացած բան, որին նայում եք, կարող են տեսնել:*

Խնդիրը.

Լուծումը.

Խնդիրը.

Լուծումը.

*Ես ուղարկեցի հաղորդագրությունը ուղղակի կատակով, բայց դա սխալ հասկացվեց, նա լացելով գնաց իր ծնողների մոտ, նրանք բողոքեցին դպրոցին և ես լուրջ անախորժությունների մեջ ընկա: Հավատս չի գալիս, որ նա չհասկացավ, որ ես պարզապես նրա հոգու հետ էի խաղում:*





*Դա շատ անարդար բան է. ես մի նկար ուղարկեցի նրան և ենթադրվում էր, որ այն գաղտնի է, ես չէի նախատեսում դա ցույց տալ մեկ ուրիշի: Ես նրան վստահեցի և այժմ զգում եմ, որ ինձ հիմարացրել են: Բոլորն ինձ ասում են, որ էլ ոչինչ չեմ կարող անել դրա հետ կապված, որ էլ չեմ կարող այն հետ ստանալ, բոլորը ծիծաղում են ինձ վրա, չեմ հասկանում, թե ինչպես կարող էի այդքան հիմար գտնվել:*

Խնդիրը.

Լուծումը.

Created by European Schoolnet in collaboration with the Insafe Network and with the support of Google, Liberty Global and the European Commission / Creative Commons License by-nc-nd/3.0

## Ամենավատ բանը, որ ինձ հետ տեղի է ունեցել Համացանցում:

*Ես Ֆեյսբուքում էի և կարճ հաղորդագրություն գրեցի ընկերոջս էջին: Վիրուսի պատճառով հաղորդագրությունը մի քանի անգամ էր ուղարկվել: Հաջորդ օրը, երբ ես բացեցի իմ անձնական էջը, հասկացա, որ այդ հաղորդագրությունը մի քանի անգամ է գնացել նրան: Մի էջից ավելի տիրույթում այդ նույն հաղորդագրությունը անվերջանալի թվով կրկնված էր:*




**Քայլ 1.** Ձախ կողմի սյունակում նկարագրեք ամենավատ իրավիճակը, որում հայտնվել եք և ինչ ելք ունեցավ միջադեպը: Բաժանեք միջադեպը 5 հստակ քայլերի:

| | | |
|---|---|---|
| 1 | Ես... | |
| 2 | Հետո ... | |
| 3 | | |
| 4 | | |
| 5 | | |

**Քայլ 2.** Ինչպես փոխել իրադարձությունների ընթացքը: Դրական արդյունքի հասնելու համար ո՞ր կետում կարող էիք փոխել իրադարձությունների ընթացքը: Օգտագործեք աջ կողմի քառակուսիները՝ ցույց տալու, թե ինչպես կարող էին իրերն այլ ընթացք ստանալ:

Created by European Schoolnet in collaboration with the Insafe Network and with the support of Google, Liberty Global and the European Commission / Creative Commons License by-nc-nd/3.0

# 3.3. Նախաձեռնողական մասնակցություն ... և պատասխանատվության զգացում

**Նախաձեռնողականություն** — Իրավիճակը ստեղծելու և վերահսկելու կարողությունը՝ իրավիճակին զուտ արձագանքելու փոխարեն:[16]

**Առցանց իրավիճակի վերահսկողությունը չկորցնելը կարևոր է:**
Արդյո՞ք վերահսկում եք այն նյութերը, որ ինքներդ եք ստեղծում եք կամ ստանում, ինչպես նաև այն հարաբերությունները, որոնց մասնակցում եք: Համացանցային կյանքում հնարավոր է ընկերություն հաստատել այն մարդկանց հետ, ում գիտեք միայն առցանց:

Ի՞նչ եք կարծում հետևյալ հարցերի մասին

**Q1** Ե՞րբ է առցանց ծանոթը դառնում ընկեր:

**Q2** Արդյո՞ք առցանց բոլոր հարաբերություններն են ռիսկային:

**Q3** Արդյո՞ք 18 տարեկանից ցածր որևէ անձի պետք է թույլ տալ հանդիպել առցանց ընկերոջը:

**Q4** Որո՞նք են անձնական հարցերի շուրջ առցանց ընկերների հետ զրուցելու դրական կողմերը: Կա՞ն արդյոք բացասական կողմեր:

Հիշեք, որ երբևէ չպետք է իրականում հանդիպեք առցանց ընկերոջն՝ առանց վստահելի չափահասի (օրինակ՝ ծնողի, խնամողի…) այդ մասին նախապես տեղյակ պահելու:

**Լինել նախաձեռնողական:**
Դիտարկեք ստորև ներկայացված աղյուսակը: Նշեք այն գործողությունները, որոնք, ձեր կարծիքով, նպաստում են առավել անվտանգ հանդիպմանը մի ընկերոջ հետ, որին դուք նախկինում միայն առցանց եք հանդիպել:

| | |
|---|---|
| ☐ | Դուք պայմանավորվում եք հանդիպելու մի աղմկոտ հանրային վայրում և ամբողջ ժամանակ մնում այնտեղ, այսինքն՝ չեք գնում այգի զբոսանքի կամ մեկը մյուսի տուն: |
| ☐ | Դուք մի երկար ժամանակ շփվել եք ձեր առցանց ընկերոջ հետ և շատ բան գիտեք նրա մասին: |
| ☐ | Դուք փոխանակել եք հեռախոսահամարները և ԱՀ (IM) տվյալները: |
| ☐ | Դուք խոսել եք ձեր ծնողների/դաստիարակների հետ այդ հանդիպման մասին և ստացել եք խորհրդատվություն, թե ինչպես կազմակերպել անվտանգ հանդիպում:. |

[16] Oxford Dictionaries (2012), 'proactive' (online), http://oxforddictionaries.com/definition/english/proactive, consulted on 8/11/2012.

Created by European Schoolnet in collaboration with the Insafe Network and with the support of Google, Liberty Global and the European Commission / Creative Commons License by-nc-nd/3.0

| | |
|---|---|
| ☐ | Առցանց ընկերը նաև շփվում է իրական կյանքում ձեր ընկերների հետ: |
| ☐ | Լիցքավորեք հեռախոսը և համոզվեք, որ դրա մեջ գումար կա, որպեսզի կարողանաք խոսել: |
| ☐ | Դուք Համացանցով ուսումնասիրել եք նրա անձնական էջը. գիտեք, թե ինչպիսի բաներ է ասում և ինչ մարդկանց հետ է հաղորդակցվում:. |
| ☐ | Դուք ձեր ընկերների հետ խոսել եք հանդիպման մասին և միասին եք պատրաստվում հանդիպել այդ առցանց ընկերոջը: |
| ☐ | Դուք համացանցային տեսախցիկով շփվել եք ձեր առցանց ընկերոջ հետ և զգում եք, որ կարող եք վստահել նրան: |
| ☐ | Դուք գիտեք, որ չեք կարող ձեզ թույլ տալ մտնելու այնպիսի քննարկումների մեջ ձեր առցանց ընկերոջ հետ, որից հետո անհարմար կզգաք: |
| ☐ | Դուք խնդրել եք, որպեսզի ձեր ծնողը/դաստիարակը/ընկերը ձեզ զանգահարի հանդիպման կեսին՝ ստուգելու, որ ամեն ինչ նորմալ է կամ որպեսզի դուք առիթ ունենաք հեռանալու, եթե հանդիպմանն այնպես չեք զգում, ինչպես որ պետք է: |




*Ամենավատ միջադեպը, որ ինձ հետ տեղի է ունեցել առցանց: Երբ ես զրուցարանում զրուցել եմ մի անձի հետ և հետո հասկացել, որ ինքն իրականում ինքը չէր:*

**Այժմ մտածեք հետևյալի մասին.** Եթե որևէ տեղեկություն չլիներ ձեր մասին Համացանցում, ապա, ի՞նչ եք կարծում, մարդիկ ի՞նչ կմտածեին ձեր մասին:

Հսկողությունը մի կորցրեք: Կան մի շարք գործիքներ, որոնք կարող եք օգտագործել վերահսկելու ձեր առցանց հարաբերությունները: Իսկ ի՞նչ կասեք այն մասին, թե ինչպես վերահսկել այն նյութերը, որ դուք կամ ձեր ընկերներն եք ստեղծում Համացանցում:

Կարո՞ղ եք պատկերացնել մի իրավիճակ, երբ դուք արել եք ինչ-որ մի բան առցանց, երբ երիտասարդ էիք, որը կարող է նեղացնել ձեր հնարավորություններն ապագայում:

Created by European Schoolnet in collaboration with the Insafe Network and with the support of Google, Liberty Global and the European Commission / Creative Commons License by-nc-nd/3.0

*Գիտե՞ք:*

*2006թ. Վանկուվերում բնակվող մի հոգեթերապևտ Էնդրյու Ֆելդմար անունով հատում էր Կանադա-ԱՄՆ սահմանը՝ Սիեթլի օդանավակայանում մի ընկերոջ դիմավորելու համար, մի բան, որ շատ անգամ էր արել: Այս անգամ, սակայն, սահմանապահը ցանցում որոնման արդյունքում գտավ, որ Ֆելդմարը մի գիտական ամսագրում գրել էր, որ LSD տեսակի թմրանյութ է օգտագործել 1960-ականներին: Արդյունքում Ֆելդմարին թույլ չտվեցին մուտք գործել ԱՄՆ: «Այս դեպքը ցույց է տալիս, որ թվային տեխնոլոգիաների պատճառով հասարակության՝ մոռանալու ունակությունը կասեցվել է և փոխարինվել կատարյալ հիշողությամբ»:[17]*

Պատկերացրեք, որ դուք 24 տարեկան Համացանցի հաջողակ նախագծող եք: Ձեզ համար կարևոր է, որ ձեր առցանց հեղինակությունը լինի դրական և որ դուք առցանց շատ ակտիվ երևաք: Վերլուծեք ստորև ներկայացված թվային տեղեկությունները: Եթե կարողանայիք թվային վերջնաժամկետ սահմանել, այն է՝ ժամանակային կետ, որի լրանալուն պես կուզենայիք, որ տեղեկությունները ջնջվեին, կսահմանեի՞ք: Եթե այո, ո՞ր տարին կլիներ դա:

| | | |
|---|---|---|
| Ձեր լուսանկարները, որ ձեր ընկերներն են այս տարի վերբեռնել | Բլոգի հոդված տեղադրված ձեր կողմից 10 տարեկան հասակում | Մեկնաբանությունները, որ թողել եք մի ընկերոջ սոցցանցի էջում |
| | | |
| Պատասխանները, որ տվել եք հարցերի անանուն մի կայքում | Նկարները՝ ձեր, ձեր ընտանիքի ու ընկերների, որ տեղադրել եք Թվիթերում | Կայք, որը ստեղծել եք 15 տարեկանում |
| | | |
| Բլոգ, որտեղ օրը մեջ նյութեր եք տեղադրում | Ձեր օգտագործած հավելվածներով հանրային տեղադրված նյութերը | Սոցիալական ցանցերում առկա տեղեկությունները, որոնք այլևս չեք օգտագործում |
| | | |

[17] Jeffries, S. (2011), 'Why we must remember to delete – and forget – in the digital age (online) http://www.guardian.co.uk/technology/2011/jun/30/remember-delete-forget-digital-age, consulted on 8/11/2012.

Created by European Schoolnet in collaboration with the Insafe Network and with the support of Google, Liberty Global and the European Commission / Creative Commons License by-nc-nd/3.0

# 4.1. Ներկայացեք աշխարհին

**Ինքնություն**

Յուրահատուկ հատկանիշներ, որոնք չունեն այլ անձինք կամ երևույթները: Այն անհատական հատկանիշները, որոնց միջոցով անձանց հնարավոր է ճանաչել:[18]

Համացանցում ձեր ինքնությունը ձևավորվում է մի շարք գործոններով: Կարո՞ղ եք նշել դրանցից մի քանիսը:




Այնպես, ինչպես իրական, Համացանցից դուրս աշխարհում, դուք ձևավորում եք առցանց ինքնություն, երբ ակտիվ եք Համացանցում:




1 *Ձեր լուսանկարները, որոնք դուք*
2 *տեղադրում եք ցանցում*
3
4
5
6
7
8

[18] Collins (2012), ‘Identity’ (online), http://www.collinsdictionary.com/dictionary/english/identity, consulted on 8/11/2012.

Created by European Schoolnet in collaboration with the Insafe Network and with the support of Google, Liberty Global and the European Commission / Creative Commons License by-nc-nd/3.0

Ձեր առցանց հեղինակությունը հաճախ հիմնված է այն մանրամասների վրա, որ մարդիկ են գտնում ձեր մասին, տվյալների, որ դուք եք հրապարակում, կամ պատկերների, որ կան ցանցում:

Դանիել Սոլով
Հեղինակության ապագան

*«Բամբասանքը կարող է անարդարացի կերպով արատավորել անձի հեղինակությունը. այն հաճախ գոյություն ունի, որպես կիսատ-պռատ ճշմարտությունների և անավարտ պատմությունների մի փունջ»*[19]

*Սոցիալական ցանցերի իմ դիմագիծը Իմ առցանց ինքնությունն է:*




Այն տեղեկությունները, որ այլ անձինք կարող են գտնել ձեր մասին առցանց, կարող են սխալ կերպ ներկայացնել ձեզ: Իհարկե, այս տեղեկություններից շատերը կարող են կտրված լինել ենթատեքստից: Սակայն սա անկարևոր է, որովհետև եթե մեկը մի անգամ տեսնի մի պատկեր կամ նյութ, որը վերաբերում է ձեզ, նրանք արդեն իսկ կարծիք կստեղծեն ձեր մասին:

## Ինչ տպավորություն են ստեղծում այս պատկերները







*Ես գիտեմ, որ համալսարանները պատրաստվում են ինձ փնտրել առցանց: Դա է պատճառը, որ ես որոշել եմ ստեղծել իրապես ուժեղ և դրական անձնական էջ: Եթե նրանք ինձ փնտրելու են, ապա ես դրանից կստանամ իմ ուզածը և ցույց կտամ նրանց այն, ինչ ես եմ ցանկանում, որ նրանք տեսնեն:*

*Համացանցում լինելը հրաշալի է. իմ ընկերներից ոչ մեկը տարված չէ այն երաժշտությամբ, որ ես եմ լսում, իսկ նրանցից ոմանք մտածում են, որ ես մի քիչ տարօրինակ եմ հագնվում: Սակայն Համացանցում ինձ ընդունում են, ես կարող եմ գտնել նաև այլ անձանց, ովքեր ինձ նման են մտածում, նրանք ինձ հասկանում են, և կարիք չկա, որ ես ձևացնեմ, որ ես այն եմ, ինչ իրականում չեմ:*

Կա՞ն արդյոք այլ իրավիճակներ, երբ Համացանցի ձեր անձնական էջը կարող է այլ կերպ օգտագործվել:

[19] Solove, D.J. (2007), 'The Future of Reputation', New Haven: Yale University Press, p. 189.

Created by European Schoolnet in collaboration with the Insafe Network and with the support of Google, Liberty Global and the European Commission / Creative Commons License by-nc-nd/3.0

# 4.2. Ինձ, ինքս և ես

**Կերպար**

Բնավորության տիպ, որը կարծես հատուկ է անձին, սակայն հաճախ տարբերվում է նրա իրական էությունից: [20]

Ձեր ինքնությունը հաստատուն վիճակ չէ. ոչ միայն այն կարող է փոփոխվել ժամանակի ընթացքում, այլ մեկ անձը կարող է ունենալ մի քանի ինքնություն՝ կախված, թե ինչ համատեքստում է գտնվում: Կարո՞ղ եք նկարագրել այն տարբեր ինքնությունները, որ կարող եք դրսևորել հետևյալ իրավիճակներում:

**Դպրոց**

**Տուն**

(օրինակ՝ ծնողների հետ, տատիկ-պապիկների հետ, եղբայրների և քույրերի հետ)

**ԴՈՒՔ**



**Տեղական համայնք**

**Աշխատանք**

- Պատասխանատու երիտասարդ
- Երիտասարդների հետ աշխատող
- Տեղական հրուշակագործական ընկերության կիրակնօրյա աշխատող

**Սոցիալական ցանցերի համայնքներ**

[20] Cambridge Dictionaries online (2013), 'persona' (online), http://dictionary.cambridge.org/dictionary/british/persona?q=persona, consulted on19/12/2012.

Created by European Schoolnet in collaboration with the Insafe Network and with the support of Google, Liberty Global and the European Commission / Creative Commons License by-nc-nd/3.0

Ընտրեք չորս «տարբեր» ինքնություններ, որ դուք դրսևորել եք նախկին վարժությունում և լրացրեք պահանջվող տեղեկությունները ինքնության քարտեզում:

Դրսևորումը.

Հատկանիշները.

Որտեղ եք հայտնվում.

Գործողությունները.

Դրսևորումը.

Հատկանիշները.

Որտեղ եք հայտնվում.

Գործողությունները.

ԴՈՒՔ



Դրսևորումը.

Հատկանիշները.

Որտեղ եք հայտնվում.

Գործողությունները.

Դրսևորումը.

Հատկանիշները.

Որտեղ եք հայտնվում.

Գործողությունները.

Սոցիալական շատ ցանցեր այժմ օգտատերերին տրամադրում են հնարավորություն դասակարգելու առցանց ընկերներին տարբեր «խմբերում» և ընտրել, թե ինչ նյութ տարածել յուրաքանչյուր խմբի համար: Ինչ խմբեր կարող եք ստեղծել և յուրաքանչյուր խմբի ձեր ընկերներին ինչ «հասանելիություն» կտայիք:

| | Խմբի անվանումը | Մատչելիության մակարդակը |
|---|---|---|
| 1 | Մտերիմ դպրոցական ընկերներ | |
| 2 | | |
| 3 | | |
| 4 | | |
| 5 | | |
| 6 | | |
| 7 | | |

Created by European Schoolnet in collaboration with the Insafe Network and with the support of Google, Liberty Global and the European Commission / Creative Commons License by-nc-nd/3.0

# 4.3. Ճշմարտություն և միայն ճշմարտություն

**Խաբեությունը** ենթադրում է այնպիսի գործողություններ, որոնք այլ անձի ստիպում են հավատալ ձեր մասին մի բանի, որն իրականությանը չի համապատասխանում.[21]

Երբ ձևավորում ենք մեր առցանց ինքնությունը, հաճախ հարց է ծագում, թե արդյոք անհրաժեշտ է, որ միշտ ճշգրիտ տեղեկություններ տրամադրենք մեր մասին: Որտեղո՞վ է անցնում ինքնության գիտակցման և «**ինքնության խաբեության**» միջև եզրագիծը:

Ի՞նչ եք կարծում ստորև ներկայացված սցենարների մասին: Համաձայն ե՞ք այս մարդկանց գործողությունների հետ: Կա՞ն արդյոք ավելի ճիշտ գործողություններ, որ կարելի էր ձեռնարկել:

**Սառան** 12 տարեկան է, սակայն ցանկանում է հաշիվ ունենալ Ֆեյսբուքում: Կայքի պայմաններում ու նորմերում ասված է, որ նա պետք է լինի առնվազն 13 տարեկան: Նա ստեղծում է անձնական էջ, որտեղ ներկայանում է 18 տարեկան:

Արդյոք դա ընդունելի՞ է: Ինչո՞ւ:

Ճիշտ կլիներ …

Չնայած Թոմն իրականում շատ է սիրում քեֆ անել, նա LinkedIn-ում ստեղծել է անձնական էջ, որը միայն ներկայացնում է համալսարանում իր ստացած գիտական աստիճանները և մի քանի սիրած զբաղմունք, որոնք կհամոզեն իր գործատուներին իրեն աշխատանք տալ: Նա չի հիշատակում իր սերը պարերի և քեֆերի նկատմամբ, քանի որ իր կարծիքով դա կարող է սխալ պատկերացում ստեղծել իր մասին:

Արդյոք դա ընդունելի՞ է: Ինչո՞ւ:

Ճիշտ կլիներ...

Սոցիալական ցանց-կայքում Լաուրան որոշում է օգտագործել կեղծանուն, պահանջվող իրական անվան փոխարեն:

Արդյոք դա ընդունելի՞ է: Ինչո՞ւ:

Ճիշտ կլիներ...

[21] Truth about Deception (2012), ‘What is the Definition of Deception?’ (online), http://www.truthaboutdeception.com/lying-and-deception/ways-people-lie/what-is-deception.html, consulted on 8/11/2012.

Created by European Schoolnet in collaboration with the Insafe Network and with the support of Google, Liberty Global and the European Commission / Creative Commons License by-nc-nd/3.0

**Բարտն** ունի խնդիր, որի մասին չի ցանկանում խոսել իր ծնողների կամ ընկերների հետ: Նա թաքցնում է իր ինքնությունն առցանց աջակցության ցանցում, որպեսզի կարողանա ավելի բաց խոսել այդ մասին:

Արդյոք դա ընդունելի՞ է: Ինչո՞ւ:

Ճիշտ կլիներ...

Դպրոցում **Դավիթը** միշտ ամաչկոտ է, սակայն երբ խաղում է իր սիրելի առցանց խաղը, սիրում է առաջնորդի դեր ստանձնել և պայքարել այլ խաղացողների դեմ:

Արդյոք դա ընդունելի՞ է: Ինչո՞ւ:

Ճիշտ կլիներ...

**Ջուլին** նոր ռեստորան է բացել: Յավանական հաճախորդների կողմից ռեստորան այցելելը և ճաշելը խրախուսելու նպատակով նա ստեղծում է անձնական էջ մեկ այլ անունով և շատ լավ կարծիք գրում իր ռեստորանի մասին և առաջարկում է, որ իր մերձավորները և ընկերներն անեն նույնը:

Արդյոք դա ընդունելի՞ է: Ինչո՞ւ:

Ճիշտ կլիներ...

**Աննան և Սոֆին** Մատանիների տիրակալը ֆիլմերի մեծ երկրպագուներ են: Երբ նրանք շփվում են առցանց այդ ֆիլմի այլ երկպագուների հետ, նրանք ձևացնում են, թե էլֆերի հետնորդներն են և ներկայանում որպես Ամարիե և Արեդհել:

Արդյոք դա ընդունելի՞ է: Ինչո՞ւ:

Ճիշտ կլիներ...

Created by European Schoolnet in collaboration with the Insafe Network and with the support of Google, Liberty Global and the European Commission / Creative Commons License by-nc-nd/3.0

# 5.1. Լինելով ծպտյալ համացանցային աշխարհում

**Անանունություն** → Անհայտ կամ չճանաչված մնալու հատկություն կամ վիճակ[22]



From Wikipedia, the free encyclopedia

Գտեք այն գրողի պատմությունը, որի հուշարձանը տեղադրված է Բուդապեշտի քաղաքային զբոսայգում Վայդահունյադ ամրոցի առջև: Ինչպե՞ս է սա կապված անանունության հետ:

*Արդյոք կարծում եք, որ այսօրվա աշխարհում դեռևս հնարավո՞ր է մնալ անանուն:*



*Ինչ-որ մի տեղ Համացանցում միշտ կարելի է գտնել ձեր անունը, օրինակ՝ ձեր դպրոցի կայքում: Նաև ձեր ընկերները կարող են հրապարակել ձեր լուսանկարն ու ավելացնել ձեր անունը՝ առանց ձեզ այդ մասին ասելու:*

**Ձեր թվային ոտնահետքի որոնումներում**

Նույնիսկ այն դեպքում, երբ առցանց չեք հրապարակում մասնավոր բնույթի տեղեկություններ ձեր մասին, հնարավոր է, որ ձեր անձնական տվյալները և նախընտրությունները հայտնի դառնան այլոց: Դիտարկեք ստորև օրինակը. կարո՞ղ եք մտածել 4 այլ եղանակ, որոնց միջոցով մարդիկ կարող են մասնավոր բնույթի տեղեկություններ պարզել ձեր մասին:

1 *Որոնման կայքերում գննվում են իմ գրածները, որպեսզի պարզեն իմ նախընտրությունները: Դրանք օգտագործվում են գովազդի նպատակով:*

2

3

4

5

[22] The Free Dictionary, ‘Anonymity’ (online), http://www.thefreedictionary.com/anonymity, consulted on 07/12/2012.

Created by European Schoolnet in collaboration with the Insafe Network and with the support of Google, Liberty Global and the European Commission / Creative Commons License by-nc-nd/3.0

**Անձնական կյանքի գաղտնիությունը**

մարդու իրավունքն է գաղտնի պահելու իր անձնական հարցերը կամ հարաբերությունները: [23]




*Ես անհանգստացած եմ նրանով, որ կառավարական մարմինները կարող են իմանալ իմ գտնվելու վայրի և գործունեության մասին: Նրանք իմ ընկերների ցանկում չեն, սակայն չգիտեմ, թե որքան նրանք կարող են տեսնել իմ պատերի ներսում: Իմ կարգավորումները բաց չեն լայն հանրության առջև, սակայն չգիտեմ, թե արդյոք դա բավական է նրանց այնտեղ թույլ չտալու համար:*

«Եթե չեք ցանկանում, որ ձեր մասնավոր բնույթի տեղեկությունները հայտնվեն Համացանցում, մի տեղադրեք դրանք այնտեղ»:

*Ճիշտ է, բայց անգամ եթե իմ ընկերներից և ոչ մեկը և ոչ էլ ես ոչինչ չտեղադրենք Ինտերնետում, իմ անձնական տեղեկությունները հավաքվում և օգտագործվում են:*

*Ճիշտ է, սակայն ինչ կասեք այն տեղեկությունների մասին, որ ձեր ընկերներն են հրապարակում ձեր մասին: Արդյո՞ք կան բաներ, որ կնախընտրեիք, որ ձեր ընկերները չտեղադրեին ձեր մասին և եթե այո, ապա ինչ:*

*Լինել ծպտյալ առցանց: Ինչո՞ւ: Եթե մարդիկ այս կամ այն կերպ չկան ցանցում, դա նրանց շատ կասկածելի է դարձնում:*

Արդյո՞ք համաձայն եք այս կարծիքների հետ, թե՞ ոչ: Ինչո՞ւ:

[23] Cambridge Dictionaries online (2013), ‘privacy’ (online), http://dictionary.cambridge.org/dictionary/british/privacy?q=privacy, consulted on19/12/2012.

Created by European Schoolnet in collaboration with the Insafe Network and with the support of Google, Liberty Global and the European Commission / Creative Commons License by-nc-nd/3.0

# 5.2. Մոռացվելու իրավունքը. Թվային հետքի հեռացումը

ԼԱՎԱԳՈՒՅՆԸ ՆԱԽՔԱՆ
..............................

**Իսկ ի՞նչ կլիներ, եթե կարողանայիք ստեղծել թվային ժամկետները լրանալու ամսաթվեր, որպեսզի տեղեկություններն ավտոմատ կերպով ջնջվեին տարիներ անց ձեր ընտրած անցյալի մի կետից: Ինչպիսի՞ նյութեր կցանկանայիք պահպանել ընդմիշտ:**

Ի՞նչ տեղեկություններ, ըստ ձեզ, պետք է ջնջեք նախքան աշխատանքի փնտրտուք սկսելը:

Նշել, թե ինչ տեղեկություններ գիտեք ձեր մասին, որ առկա են Համացանցում և դրանցից յուրաքանչյուրի այնտեղ մնալու վերջնաժամկետը:

Պահպանել մինչև ..............................

Պահպանել մինչև ..............................

Պահպանել մինչև ..............................

Պահպանել մինչև ..............................

Պահպանել մինչև ..............................

Պահպանել մինչև ..............................

**Տարածել, թե չտարածել, սա է խնդիրը:**
Մինչ որոշ անձինք նախընտրում են իրենց անձնական էջը պահել գաղտնի, ուրիշները ցանկանում են իրենց կյանքի ամենաաննշան մանրամասները կիսել ողջ աշխարհի հետ: Որոշ մարդիկ սիրում են կարդալ ամեն ինչ այլ անձանց կյանքի մասին, մինչդեռ ուրիշները փոքր-ինչ նյարդայնանում են, երբ նրանց հեղեղում են ոչ օգտակար տեղեկություններով: ...
Ըստ ձեզ՝ մարդիկ ի՞նչ տեղեկություններ պետք է տարածեն, իսկ ինչը ՝ ոչ:

Պետք է տարածեն.

Չպետք է տարածեն.

Created by European Schoolnet in collaboration with the Insafe Network and with the support of Google, Liberty Global and the European Commission / Creative Commons License by-nc-nd/3.0

Կարդացեք ստորև ներկայացված պատմությունները և գրեք ձեր մեկնաբանություններն ու մտքերը:

*Ես դասավանդում եմ ՏՏ ավագ դպրոցում, և իմ ընկերներից ոմանք ինձ ընկերության առաջարկ են արել Ֆեյսբուքում: Երեկ ես նկատեցի, որ իմ ուսանողներից մեկը միացել է մի խմբի, որը կոչվում է «Օրինականացնել մարիխուանան»: Չնայած ես չունեմ ուղղակի ապացույցներ, ես չեմ դադարում մտածելուց այն մասին, թե արդյոք նա օգտագործում է թմրանյութ: Արդյո՞ք ես պետք է խոսեմ նրա մոր և հոր հետ, թե համարեմ, որ դա մի մեծ բան չէ և չհայտնեմ ոչ մեկի:*

*Դպրոցն ավարտելուց հետո ես ցանկանում եմ դառնալ լրագրող, իսկ այսօր դուք պարզապես ոչինչ չեք կարող անել առանց առցանց ներկայության: Այդուհանդերձ, ես արել եմ այնպես, որ տարածեմ միայն այնպիսի տեղեկություններ, որ մարդիկ կուզենային իմանալ և որոնք ներկայացնում են իմ ծրագրի դրական կողմերը: Որքան շատ են ինձ հետևողները, այնքան ավելի բարձր կլինի իմ համբավը, մարդիկ կսկսեն լսել ինձ, և հենց դա է Համացանցի գեղեցկությունը: Երբ ինչ-որ բան հայտնվում է Համացանցում, դա այլևս կանգնեցնել չի լինի:*

*Իհարկե, կան ռիսկեր. նկատի ունեմ, որ բոլորն ունեն առցանց համբավ, սակայն կարծում եմ, որ մարդիկ այդքան էլ լավ չեն ըմբռնում հարցը: Ես ինքս եմ որոշում, թե ում եմ ուզում տեսնել առցանց «ընկերներիս» շարքում: Ես ունեմ 460 ընկեր, սակայն նրանց բոլորի համար իմ ամեն ինչը հասանելի չէ: Սոցիալական ցանցերի մեծ մասը թույլ է տալիս կարգավորել անձնական էջերի գաղտնիութունը, սակայն մարդիկ չեն օգտվում այդ հնարավորություններից: Անձնական կյանքի գաղտնիությունը մեզնից է կախված:*

*Որպես մարդկային ռեսուրսների պատասխանատու՝ ես ամեն օր փնտրում եմ նոր մարդկանց, որոնք կգան նկաշխատեն մեր ընկերությունում: Իհարկե մենք հաշվի ենք առնում թեկնածուի դիմում-նամակը, ինքնակենսագրությունը, գիտելիքներն ու հմտությունները:*

Created by European Schoolnet in collaboration with the Insafe Network and with the support of Google, Liberty Global and the European Commission / Creative Commons License by-nc-nd/3.0

*Ես կարդում էի իմ հաղորդագրությունները և հանկարծ հայտնաբերեցի մի նամակ հարկային վարչությունից, որն ասում էր, որ իմ գումարի միայն մի մասն է վճարվել: Հաղորդագրությունն ասում էր, որ ես պետք է իմ բանկային տվյալներն ուղարկեմ: Իհարկե, սա կեղծ նամակ էր և պետք է որ ես հասկանայի, որ պաշտոնական հաստատությունը երբեք նման բնույթի տեղեկությունն ինձնից էլ փոստով չէր հայցի: Հափշտակողները իմ հաշվից մի կլորիկ գումար էին տարել:*

*Ես որոշ վատ բաներ եմ արել իմ կյանքում, սակայն դրանց համար դատապարտվել եմ և իմ պատիժը կրել բանտում: Այդուհանդերձ, իմ մասին մի քանի կայքերում գրում են որպես հանցագործի: Ես պահանջել եմ, որ այդ բոլոր կայքեցրից այդ տեղեկությունները հեռացվեն: Ես երկրորդ հնարավորության իրավունք ունեմ, և կարիք չկա, որ որևէ մեկն իմանա իմ անցյալի մասին:*

Գիտե՞ք, թե որքան ժամանակով են պահպանվում ձեր ուսումնական հաստատության արխիվները:
Ըստ ձեզ՝ ո՞ւմ են դրանք հասանելի: Ի՞նչ տեղի կունենա ձեր փաստաթղթերի հետ, երբ ավարտեք դպրոցը:




*Ցանկանում միայն իմ թույլատրած մարդիկ կարող են տեսնել իմ լուսանկարները և կարդալ, թե ինչ եմ հրապարակում: Ես դիտավորյալ սահմանափակել եմ իմ մասնավոր տեղեկությունների գաղտնիությունը:*

Սույն սանդղակում որտե՞ղ կդնեիք առցանց նյութերի տարածման ձեր վարքագիծը:

| Անանուն | Պաշտպանական | Կիսվում եմ աշխարհի հետ |
| --- | --- | --- |
| *Ես չեմ սիրում իմ մասին շատ տեղեկություններ հայտնել այլ մարդկանց: Ես օգտվում են սոցիալական ցանցերից, միայն երբ դրանց կարիքն ունեմ:* | *Ես չեմ պատրաստվում իմ մասին ամեն ինչ տարածել ցանցում, պետք է միշտ զգուշավոր լինել, սակայն սիրում եմ իմ մտքերն ու փորձը կիսել ընկերներիս հետ:* | *Ես որևէ վատ բան չեմ արել, ուրեմն ինչու՞ չկիսվել մնացածի հետ:* |



Created by European Schoolnet in collaboration with the Insafe Network and with the support of Google, Liberty Global and the European Commission / Creative Commons License by-nc-nd/3.0

# 5.3. Ցուցադրեք ձեզ, բայց ոչ՝ չափից ավելի

**Սեքստինգ**

«Սեքս» և «տեքստ» բառերի համադրությունն է և նշանակում է բջջային հեռախոսով բացահայտ սեռական բնույթի հաղորդագրություններ կամ պատկերներ ուղարկել: [24]

Համացանցը հոյակապ միջոց է սիրախաղի և փորձարարությունների համար, հատկապես, երբ շատ ամաչկոտ եք իրական կյանքում: Ինչ-որ մեկին մոտենալու արգելապատնեշներն ավելի ցածր են և ձեր համարձակությունն ինչ-որ մեկին մոտենալու իրական կյանքում աստիճանաբար կարող է աճել: Բայց որքա՞ն հեռուն կգնաք:

## Հետազոտեք ձեր սահմանները:

Որքա՞ն հեռուն կգնաք առցանց: Յուրաքանչյուր նախադասության պարագայում նշեք, թե որքան վստահ կզգայիք տվյալ իրավիճակում: Ձեր պատասխանները քննարկեք ձեր կողքինի հետ:

1. 124.Ձեր առցանց ընկերը, ում հետ զրուցարանով շփվում եք մի որոշ ժամանակ, ձեզ խնդրում է շատ ազատ լուսանկար ուղարկել իրեն:




2. Ես Համացանցում որոշ տեղեկություններ եմ գտել այն բաների մասին, որոնց վերաբերյալ մի քիչ վախենում կամ ամաչում եմ հարցնել ծնողներիս:




3. Ընկերս ինձ ուղարկել է իր դպրոցի մի աղջկա լուսանկարը, երբ նա ցնցուղ է ընդունում, իսկ ես այն ուղարկել եմ իմ ընկերներին: Չափազանց զվարճալի է:




**Askyourquestions.com**

*Անանուն, 15 տարեկան*

*«Ես շատ ամաչկոտ եմ, երբ բանը հասնում է իրական կյանքում նոր մարդկանց հանդիպելուն, էլ չասած՝ նրանց հետ սիրախաղի մեջ մտնելուն: Համացանցում ես ինձ ավելի ապահով եմ զգում, քանի որ նրանց հետ դեմ առ դեմ չեմ շփվում: Կարող եք ինձ տալ մի քանի օգտակար խորհուրդներ իմ տարիքի անձանց հետ առցանց անվտանգ և զվարճալի զրույցներ ունենալու մասին չաթով:*

| Անել. | Չանել. |
| --- | --- |
| 1 | 1 |
| 2 | 2 |
| 3 | 3 |
| 4 | 4 |
| 5 | 5 |

[24] Merriam-Webster (2012), 'Sexting' (online), http://www.merriam-webster.com/dictionary/sexting, consulted on 20/10/2012.

Created by European Schoolnet in collaboration with the Insafe Network and with the support of Google, Liberty Global and the European Commission / Creative Commons License by-nc-nd/3.0



Ձեր կամ մեկ ուրիշի մերկ լուսանկարը մեկին ուղարկելը կարող է ինչ-որ մի ժամանակ շատ զվարճալի լինել, սակայն իրականությունն այն է, որ դուք չեք կարող երաշխավորել, որ այդ լուսանկարը չի հայտնվի սխալ ձեռքերում: Սրանից խուսափելու միակ ձևն այդ լուսանկարը չուղարկելն է: Այդուհանդերձ, եթե անգամ այդ լուսանկարը ուղարկվի ընդամենը մեկ հոգու, այն, միևնույն է, կարող է ունենալ իրավական հետևանքներ:

Պարզեք, թե արդյոք ստորև գործողություններն օրինական են: Եթե դրանք օրինական չեն, կարող եք բացատրել, թե ինչու?

*Բենը (14 տարեկան) ինքն իրեն լուսանկարել էր մերկ և ուղարկել այն իր ընկերուհուն (նույնպես 14 տարեկան):*

*Ես նամակ էի ուղարկել իմ ընկերոջը ինտիմ բովանդակությամբ: Նա այդ օրը փոքր-ինչ անտրամադիր էր, և ես մտածեցի, որ կուրախացնեմ նրան:*

*Իմ ընկերուհին (15 տարեկան) իր մարմնի վերին հատվածի մերկ լուսանկար է ուղարկել ինձ:*

*Իմ ընկերներից մեկն առցանց տեղադրել էր մի տեսանյութ, թե ինչպես էր իր ընկերներից մեկը (18 տարեկան) ցնցուղ ընդունում: Այն անմիջապես հեռացվել էր սոցիալական ցանցի կայքից, սակայն վնասն արդեն պատճառված էր, բոլորն այն տեսել էին արդեն:*

Created by European Schoolnet in collaboration with the Insafe Network and with the support of Google, Liberty Global and the European Commission / Creative Commons License by-nc-nd/3.0

# 5.4. Իմ և քո անձնական կյանքի գաղտնիությունը

Առաջին հայացքից թվում է, որ յուրաքանչյուրը պատասխանատու է իր անձնական կյանքի գաղտնիության պաշտպանության համար:




*Ես փորձում եմ պաշտպանել ինձ այն կարգավորումների միջոցով, որ գոյություն ունեն, որպեսզի իմ ապագա մասնագիտական գործունեության վրա չազդի իմ ներկայիս անձնական կյանքը կամ դրա վրա չազդեն չարակամ հաքերները:*

Այդուհանդերձ, ձեր անձնական կյանքի գաղտնիությունը միայն ձեզնից չի կախված. այն նաև կախված է այլ անձանցից: Անձնական կյանքի գաղտնիությունն իրավունք է, սակայն այն նաև պատասխանատվություն է: Կարևոր է մտապահել, որ ցանկացած գործողություն որ կատարում եք առցանց կարող է հետևանքներ ունենալ այլոց համար: Նույնիսկ այն դեպքում, երբ պաշտպանում եք ձեր անձնական էջը, անձնական բնույթի տեղեկությունները միևնույն է կարող են տարածվել դրոշմելու միջոցով: Մտածեք մեկնաբանությունների, հավանությունների, պատկերներիր և ձեր սոցիալական ցանցի էջում զետեղվող այլ նյութերի մասին:

Ի՞նչ տեղեկությունների առնչությամբ կնախընտրեիք, որ ձեր անունը չշոշափվեր:

- ☐ Սպորտային ակումբի անդամակցության
- ☐ Ձեր վերջին քեֆի նկարների
- ☐ Ձեր ընկերուհու/ընկերոջ հետ ձեր վերջին ճամփորդության նկարների
- ☐ Ձեր երկրում զբաղվածության մասին թերթի հոդվածի տակ թողած ձեր մեկնաբանության
- ☐ Ձեր վերջին խաղացած առցանց խաղերի
- ☐ Կայքերը, որոնք վերջերս էիք այցելել

*Գիտե՞ք որ*

Այժմ որոշ սոցիալական ցանցերի կայքեր պահանջում են ձեր հաստատումը նախքան ձեր անունը կդրոշմվի որոշ տեղեկությունների առնչությամբ: Եթե համաձայն չեք, կարող եք պարզապես հրաժարվել հաստատելուց:

Արդյոք երբևէ որևէ մեկին հարցրել եք (կամ արդյոք պետք է հարցնեիք), թե կարող եք նրանց մասին անձնական բնույթի տվյալներ հրապարակել կամ հղում անել նրանց անվանը ինչ-որ մի նյութի առնչությամբ: Ե՞րբ:

**Միացեք դրսևորելով հարգանք:** Ի՞նչ է տեղի ունենում, երբ խախտվում է ձեր անձնական կյանքի գաղտնիությունը: Ինչպե՞ս կարող եք արձագանքել:

Գրեք օրինակներ ձեզ հայտնի դեպքերի, երբ խախտվել է որևէ մեկի անձնական կյանքի գաղտնիությունը և ինչպես կարող էր արձագանքել այդ անձը

| Իրավիճակ | Լուծում |
|---|---|
| *Ինձ դրոշմում են անում մի նկարում, և ես ցանկանում եմ, որ այն հեռացվի: Այդուհանդերձ, դրոշմող անձն այն չի հեռացնում:* | *Ես հաղորդում եմ սոցիալական ցանցի կայքին այդ մասին և խնդրում, որպեսզի նշումը հեռացվի:* |

Անձնական կյանքի գաղտնիությունն իմ ամենաթանկ ունեցվածքն է:

Created by European Schoolnet in collaboration with the Insafe Network and with the support of Google, Liberty Global and the European Commission / Creative Commons License by-nc-nd/3.0

Created by European Schoolnet in collaboration with the Insafe Network and with the support of Google, Liberty Global and the European Commission / Creative Commons License by-nc-nd/3.0

# 6.1. Ի՞նչ է հեղինակային իրավունքը

**Ստեղծարարություն** — Ինչ-որ մի նոր բան ստեղծելու ունակություն երևակայությամբ, լինի դա նոր լուծում խնդրին, նոր մեթոդ կամ հնարք, կամ արվեստի նորույթ.[25]

**Հեղինակային իրավունք** — … պաշտպանում է հրապարակված կամ չհրապարակված օրիգինալ աշխատանքը (հեղինակի կյանքի տևողության ընթացքում և դրանից հետո 50 տարվա ընթացքում) չարտոնված կրկնությունից առանց հեղինակի անվան մատնանշման և փոխհատուցման: Հեղինակային իրավունքը տարածվում է ոչ միայն գրքերի, այլև գովազդի, հոդվածների, գրաֆիկ ձևավորումների, պիտակների, տառերի (այդ թվում՝ էլ փոստի), երգերի բառերի, քարտեզների, երաժշտական ստեղծագործությունների, արտադրական ձևավորումների և այլնի վրա: [26]

Կարո՞ղ եք սահմանել հեղինակային իրավունքի խախտումը: (Տես գլուխ 1, էջ 10)

**Հեղինակային իրավունքի խախտում/ոտնահարում:** Միշտ չէ, որ հեշտությամբ կարելի է հասկանալ, թե ինչն է պաշտպանված հեղինակային իրավունքով և թե ինչպես կարելի է այդ օբյեկտներն օգտագործել օրինական եղանակով: Ստուգեք ձեր գիտելիքները հետևյալի վերաբերյալ. արդյոք դրանք հեղինակային իրավունքի խախտում են? [27]

☐ Այո ☐ Ոչ 1. Ներբեռնել երգեր առցանց ծառայություններ տրամադրող ընկերություններից, որոնք համաձայնագրեր ունեն հեղինակային իրավունքի իրավատերերի հետ (օրինակ՝ spotify-ը),

☐ Այո ☐ Ոչ 2. Վերբեռնել հեղինակային իրավունքով պաշտպանված պատկերը (ճանաչելով կամ չճանաչելով իրավատիրոջը),

☐ Այո ☐ Ոչ 3. Ներբեռնել iTunes-ից,

☐ Այո ☐ Ոչ 4. Վերբեռնել տեսանյութ, որ տեսագրել եք մի համերգի ժամանակ և դա այն դեպքում, երբ տոմսի վրա գրված է, որ տեսագրումն արգելվում է,

☐ Այո ☐ Ոչ 5. Հրապարակել մի հատված այլ անձի բլոգից և տեղադրել հղումն այդ բլոգին, սակայն չհարցնել թույլտվություն նրանից, .

☐ Այո ☐ Ոչ 6. Դիտել տեսանյութ, որ մեկ ուրիշն է տեսագրել մի երաժշտի կենդանի կատարումից, երբ նշված է եղել, որ տեսագրումն արգելվում է,

☐ Այո ☐ Ոչ 7. Վերբեռնել համերգի Ձեր կողմից արված լուսանկարը, երբ տոմսի վրա գրված էր, որ տեսագրումն արգելված է,

☐ Այո ☐ Ոչ 8. Վերբեռնել մի ժամանակակից փոփ երգի բառերը / կիթառի նոտաները անհատական կայք կամ սոցիալական ցանց,

☐ Այո ☐ Ոչ 9. Վերբեռնել հանրահայտ անձի լուսանկարը, որ ինքներդ եք նկարել հանրային վայրում,

☐ Այո ☐ Ոչ 10. Վերարտադրել այլ հեղինակի ողջ հոդվածը՝ նշելով հեղինակին և ներառելով հղումը (սակայն առանց հեղինակի թույլտվության):

Պատասխանները ստանալու համար այցելեք www.webwewant.eu

[25] http://www.britannica.com/search?query=creativity, consulted on 4/01/2013.
[26] Business Dictionary (2012), ‘Copyright’ (online), http://www.businessdictionary.com/definition/copyright.html#ixzz2EIwNtw73, consulted on 8/11/2012.
[27] Nominet (2012), Are you an accidental outlaw? (online), http://accidentaloutlaw.knowthenet.org.uk/question1.

## Creative Commons

Հեղինակային իրավունքի արտոնագրի օրինակ, որով թույլատրվում է ռեսուրսի տարածումն ու վերարտադրումը: Այն ներկայացնում է պարզ, ստանդարտ եղանակ, որով հանրությանը թույլատրվում է տարածել և օգտագործել ձեր ստեղծագործությունը: [28]

(Ավելի շատ տեղեկություններ creative commons արտոնագրերի մասին կարող եք ստանալ այցելելով http://creativecommons.org/licenses/)

Ստորև բերված օրինակներից որո՞նք են, ըստ ձեզ, խախտում հեղինակային իրավունքը:

1) Դուք մի լուսանկար եք գտել Flickr-ում, որտեղ օգտատերը հրապարակել է Creative Commons արտոնագիր, որը հետևյալ տեսքն ունի

BY NC ND

Դուք ցանկանում եք օգտագործել լուսանկարը՝ խթանելու մի երաժշտական կատարում, որի տոմսերն եք վաճառում: Կարո՞ղ եք արդյոք օրինական ձևով օգտագործել այդ պատկերը:

2) Դուք ունեք հազարավոր երգերի երաժշտական գրադարան: Դուք ներբեռնել եք մի p2p ծրագիր և ներբեռնում եք միայն այնպիսի նյութեր, որոնք պաշտպանված չեն հեղինակային իրավունքով: Հնարավո՞ր է, որ դուք խախտեք հեղինակային իրավունքը:

3) Դուք իրականացնում եք մի տեսաձայնային ծրագիր, որն ուղեկցելու է բեմադրությանը: Պատկերը, որ ցանկանում եք օգտագործել ունի Creative Commons արտոնագիր: Կարո՞ղ եք արդյոք օգտագործել այդ պատկերը՝ առանց խախտելու հեղինակային իրավունքը:

BY

Պատասխանները ստանալու համար այցելեք www.webwewant.eu

Գիտե՞ք, որ

Օգտատերերի 47%-ը չեն կարող վստահաբար նշել, արդյոք իրենց կողմից ներբեռնած, վերբեռնած կամ տարածած նյութերը օրինական են թե՝ ոչ, ինչը մեզ հուշում է սպառողներին կրթելու և իրազեկելու ավելի մեծ ջանքերի անհրաժեշտության մասին: [29]

[28] Find out more at http://creativecommons.org/.
[29] Ofcom (2012), Half of internet users unsure if content is legal (online), http://media.ofcom.org.uk/2012/11/20/half-of-internet-users-unsure-if-content-is-legal/.

Created by European Schoolnet in collaboration with the Insafe Network and with the support of Google, Liberty Global and the European Commission / Creative Commons License by-nc-nd/3.0

# 6.2. Արդյո՞ք դուք տեսաիեն եք




*Երաժշտության մասին մեր մտածած ամեն ինչի բացարձակ վերափոխումը տեղի կունենա 10 տարում և ոչինչ չի կարողանա կանգնեցնել դա ... Ես իմաստ չեմ տեսնում ծևացնելու մեջ, որ դա տեղի չի ունենալու: Ես միանգամայն համոզված եմ, որ հեղինակային իրավունքն, օրինակ, 10 տարուց էլ գոյություն չի ունենալու, իսկ գիրք հեղինակելն ու մտավոր սեփականությունը ևս զերծ չեն մնա նման ցնցումներից:*

*David Bowie 2002*[30]

## Արդյո՞ք դուք տեսաիեն եք:

Արդյո՞ք ուշադրություն դարձնում եք հեղինակային իրավունքի մասին օրենքին: Պատասխանեք ստորև բերված հարցերին:

1. Ես ներբեռնել եմ հեղինակային իրավունքով պաշտպանված երաժշտություն՝ առանց դրա համար վճարելու:
   ☐ Ես համաձայն եմ/ԱՅՈ ☐ Ես համաձայն չեմ/ՈՉ
2. Ես ձայնագրել եմ իմ սիրելի երաժշտական խմբի համերգները և դրանց նկարները տեղադրել սոցիալական ցանցի իմ էջում:
   ☐ Ես համաձայն եմ/ԱՅՈ ☐ Ես համաձայն չեմ/ՈՉ
3. Միշտ չէ, որ ես հայցում եմ իմ ընկերների/ընտանիքի թույլտվությունը նրանց նկարները ցանցում տեղադրելիս:
   ☐ Ես համաձայն եմ/ԱՅՈ ☐ Ես համաձայն չեմ/ՈՉ
4. Ես իմ ընկերների համար կրկնօրինակներ եմ պատրաստել այն DVD-ից, որ գնել եմ խանութում:
   ☐ Ես համաձայն եմ/ԱՅՈ ☐ Ես համաձայն չեմ/ՈՉ
5. Ես մի կայքից տեքստ եմ պատճենել և նույնությամբ օգտագործել իմ նյութում՝ առանց հիշատակելու դրա հեղինակին:
   ☐ Ես համաձայն եմ/ԱՅՈ ☐ Ես համաձայն չեմ/ՈՉ
6. Երբ օգտագործում եմ առցանց նկարներ, երբեք չեմ ստուգում, թե արդյոք դրանք պաշտպանված են հեղինակային իրավունքով:
   ☐ Ես համաձայն եմ/ԱՅՈ ☐ Ես համաձայն չեմ/ՈՉ
7. Ինձ իրականում չի հուզում, երբ մարդիկ իմ բլոգից/կայքից տեքստեր են տեղադրում այլուր՝ առանց նշելու, որ դրա հեղինակը ես եմ:
   ☐ Ես համաձայն եմ/ԱՅՈ ☐ Ես համաձայն չեմ/ՈՉ
8. Ես մեկ այլ անձի կայքի մասեր հրապարակել եմ իմ էջում՝ առանց պատշաճ հղումի:
   ☐ Ես համաձայն եմ/ԱՅՈ ☐ Ես համաձայն չեմ/ՈՉ
9. Ապօրինի ներբեռնմամբ իրականում օրենք չես խախտում, քանի որ մարդկանց մեծ մասը երբեք չեն պատժվում դրա համար:
   ☐ Ես համաձայն եմ/ԱՅՈ ☐ Ես համաձայն չեմ/ՈՉ
10. Առցանց տեղադրված նյութը պետք է հնարավոր լինի ազատորեն օգտագործել:
   ☐ Ես համաձայն եմ/ԱՅՈ ☐ Ես համաձայն չեմ/ՈՉ

[30] Pareles, J. (2002), David Bowie, 21st-Century Entrepreneur (online), The New York Times, http://www.nytimes.com/2002/06/09/arts/david-bowie-21st-century-entrepreneur.html?src=pm.

Created by European Schoolnet in collaboration with the Insafe Network and with the support of Google, Liberty Global and the European Commission / Creative Commons License by-nc-nd/3.0

Սկսեք սլաքի ձախ կողմից: Ամեն անգամ, որ կպատասխանեք «Ես համաձայն եմ /այո» մի նիշ աջ գնացեք առանցքի վրա: Ո՞ւր հասաք: Քննարկեք ձեր դիրքորոշումը խմբի այլ անդամների հետ:

**Սկսեք այստեղ:**

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|

Դուք մեծ ուշադրություն եք դարձնում հեղինակային իրավունքին:
Դուք դեմ չեք մի փոքր գումար վճարել ինչ-որ մեկի ստեղծագործության համար և միշտ հիշատակում եք այդ ստեղծագործության հեղինակին:

Դուք գիտեք հեղինակային իրավունքի մասին, սակայն միշտ չէ, որ ուշադրություն եք դարձնում դրան: Ինչո՞ւ վճարել, եթե կարելի է անվճար ներբեռնել:

Գուցե և դուք գիտեք հեղինակային իրավունքի մասին, սակայն այն ձեզ անիմաստ է թվում:
Եթե մարդիկ չեն ցանկանում, որպեսզի դուք օգտվեք իրենց ստեղծագործություններից, ապա չպետք է դրանք տեղադրեն Համացանցում:

Հեշտ է մոռացվում, որ յուրաքանչյուր երգի **հետևում** կանգնած է նվիրյալ մասնագետների խումբ, որոնք քրտնաջան աշխատում են, որպեսզի լավ երաժշտություն ստեղծեն: Երաժշտության թեմային նվիրված արշավները քաջալերում են բոլորին և հատկապես **երաժշտություն սիրող բոլոր անձանց օգտվել արտոնագրված կայքերից**: [31]

Այցելեք http://www.whymusicmatters.org/ և ավելի շատ տեղեկություններ ստացեք այդ տեղեկատվական արշավի մասին:

Ինչ եք կարծում երաժշտության թեմաներին նվիրված տեղեկատվական արշավների մասին: Դուք կաջակցեիք այդ արշավներին:

**Հեղինակային իրավունքով պաշտպանել սեփական աշխատանքը.** արդյոք երբևէ հեղինակային իրավունքի համար դիմե՞լ եք ձեր աշխատանքի համար: Ինչպե՞ս եք դա անում: Որտե՞ղ կարող եք լրացուցիչ տեղեկատվություն գտնել այդ մասին:

**Պատմության երկու կողմերը.** Այո, Համացանցից կարելի է ազատորեն օգտվել, սակայն կայքերի ծառայություններ տրամադրողները նույնպես ունեն իրավունքներ և կարող են միջամտել, եթե դուք խախտում եք օրենքը: Կարող եք բերել ձեր իրավունքների և կայքեր ստեղծողների իրավունքների օրինակներ:

| **Ձեր իրավունքները** | **Կայքն ստեղծողի իրավունքները** |
|---|---|
| *Ես իրավունք ունեմ նյութեր տարածելու Համացանցում:* | *Նրանք իրավունք ունեն ջնջելու հեղինակային իրավունքով պաշտպանված ցանկացած նյութ, որ ես կվերբեռնեմ՝ առանց պատշաճ հղումների:* |

Գիտե՞ք, որ

Հեղինակային իրավունքը խախտողներն ասում են, որ նրանք կդադարեին դա անելուց, եթե հասանելի լինեին առավել մատչելի օրինական ծառայություններ (39%), նրանց ցանկացած ամեն ինչը հասանելի լիներ օրինական աղբյուրներից (32%) կամ եթե ավելի հասկանալի լիներ, որ նյութն անօրինական է (26%) [32]

[31] http://www.whymusicmatters.org/pages/our-campaign, consulted on 4/01/2013
[32] Ofcom (2012), Half of internet users unsure if content is legal (online), http://media.ofcom.org.uk/2012/11/20/half-of-internet-users-unsure-if-content-is-legal/.

Created by European Schoolnet in collaboration with the Insafe Network and with the support of Google, Liberty Global and the European Commission / Creative Commons License by-nc-nd/3.0

# 7. Ինչ սովորեցինք՝ արդեն գիտակ ենք

## Լրացրեք թեսթը և ստուգեք ձեր գիտելիքները:

**Որոշ հարցեր ունեն մեկից ավելի պատասխաններ:**

1. **Դուք առցանց տեսանկուլթ եք գտնում, որը պարունակում է ռասիստական և անարգական նյութ: Ի՞նչ կանեիք:**
   a. Ոչինչ, այն տեղադրված է առցանց և ուրեմն ոչինչ հնարավոր չէ անել այդ կապակցությամբ:
   b. Նշում եք այդ տեսանյութը՝ օգտվելով տվյալ կայքի՝ հաղորդումներ ներկայացնելու ընթացակարգից:
   c. Զանգահարում եք ոստիկանություն և ներկայացնում բողոք:
   d. Ներբեռնում եք տեսանյութը և ուղարկում այն ձեր ընկերներին, որպեսզի իրենց տեղյակ լինեն, թե որքան վատ նյութ է դա:

2. **Ճիշտ է թե սխալ:**
   a. Խոսքի ազատությունը նշանակում է, որ դուք կարող եք այլ անձանց հասցեին վիրավորանքներ գրել Համացանցում:
   b. Ձեզ է պատկանում այլ մարդկանց հանրային վայրում արված լուսանկարների հեղինակային իրավունքը:
   c. Եթե նյութը չի խախտում սոցիալական ցանցի պայմաններն ու նորմերը, այն հնարավոր չէ հանել տվյալ կայքից:
   d. 500-ից ավելի ընկեր ունեցող ցանկացած մեկը կկարողանա պաշտպանել իր առցանց հեղինակությունը:

3. **Ստորև բերվածներից ո՞րը ձեզ կհուշի, որ կայքն անվտանգ ու ապահով է օգտագործման համար:**
   a. https
   b. Կայքի ներքևի կողպեքի նշանը:
   c. Հասցեի վանդակում կանաչ ֆոնը:
   d. .com կամ .org վերջավորությունը ցանցային հասցեում:

4. **Հետևյալից ո՞րը ձեր հեռախոսի մեջ պահպանվելու պարագայում ձեզ կդներ խարդախության հավանական ռիսկի տակ:** [33]
   a. Տան հասցեն:
   b. Ծննդյան ամսաթիվը:
   c. Առցանց բանկի մուտքի տվյալները:
   d. Կայք մուտքի տվյալները:
   e. Բանկային քարտի տվյալները:
   f. Սոցիալական ցանցի գաղտնաբառերը:
   g. Զգայուն լուսանկարներն ու տեսանյութերը:

5. **Նորմալ է ստեղծել սոցիալական ցանցի անձնական էջ՝ առանց օգտագործելու ձեր իրական անունը, երբ դա պահանջվում է այդ կայքի պայմաններում ու պարտադիր նորմերում:**

6. **Թրոլինգ նշանակում է:**
   a. Հակերային հարձակում գործել և տիրանալ մեկ ուրիշի հասցեին:
   b. Բացասական, կեղծ կամ վիրավորական մեկնաբանություններ տեղադրել առցանց հաղորդակցության ուղիներով սադրելու հուզական արձագանք որպես թիրախ ընտրված անձից:
   c. Գրել վիրավորական և/կամ բացասական հաղորդագրություններ մահացած մեկի սոցիալական ցանցի էջերին:
   d. Ուղարկել փոստաղբ հանդիսացող հաղորդակցություններ պատահական հասցեներին սոցիալական ցանցի էջում:

7. **Դուք ստացել եք ընկերության առաջարկ ինչ-որ մեկից, որն աշխատում է այն ընկերությունում, որտեղ դուք հաջորդ շաբաթ հարցազրույց ունեք:**
   a. Ընդունել առաջարկը: Նրանք ստիպված կլինեն ընդունել ձեզ այնպես, ինչպես որ կաք:

33 Վերցված է from http://inthedark.knowthenet.org.uk/question[1]

Created by European Schoolnet in collaboration with the Insafe Network and with the support of Google, Liberty Global and the European Commission / Creative Commons License by-nc-nd/3.0

b. Մերժել առաջարկը, քանի որ եթե նրանք տեսնեն, թե ինչ նյութեր են տեղադրված ձեր անձնական էջում, չեն ցանկանա, որ դուք աշխատեք իրենց մոտ:
c. Աչքի անցկացնել ձեր անձնական էջը և ջնջել այն բոլոր նյութերը, որոնք կարող են վրդովեցնել այլոց. դա ձեզնից կխլի ողջ շաբաթ-կիրակին, սակայն արժե դա անել:
d. Փոփոխել ձեր գաղտնիության կարգավորումները, որպեսզի ձեր նոր ընկերը կարողանա տեսնել միայն այն, ինչ դուք եք ցանկանում:

**8. Ստորև նշվածներից ո՞րը կօգնի ձեզ պաշտպանել առցանց հեղինակությունը:**
a. Ընկերություն անել միայն այն մարդկանց հետ, ում ճանաչում և վստահում եք:
b. Կանոնավոր կերպով վերանայել գաղտնիության կարգավորումները սոցիալական ցանցերի անձնական էջերում:
c. Ջնջել սոցիալական ցանցերի ձեր բոլոր նկարագրերը:
d. Օգտվել միայն սոցիալական մասնագիտական ցանցերից, ինչպիսին է, օրինակ, LinkedIn-ը:

**9. Դուք աշխատանքային հարցազրույց ունեք հաջորդ շաբաթ և որոշել եք լավ տպավորություն թողնել առցանց. հետևյալից ո՞րը կանեք:**
a. Կստեղծեք կեղծ ինքնակենսագրական և կբեռնեք այն տարբեր կայքերում:
b. Կմիանաք LinkedIn-ին և կներկայացնեք, որ աշխատել եք աշխարհի բարձրակարգ ընկերություններում: Միևնույն է, ոչ ոք չի ստուգում:
c. Կմիանաք ցանցին և կհեռացնեք «անհարմար» բոլոր նյութերը ձեր հանրային անձնական էջերից:
d. Ոչինչ չեք անի, քանի որ որևէ մեկին չի հետաքրքրում, թե առցանց ինչ է կատարվում: Կարևորն այն է, թե ինչպես եք ձեզ դրսևորում այդ օրը:

**10. Ուժեղ գաղտնաբառը կարող է պաշտպանել ձեր առցանց հեղինակությունը. հետևյալ նախադասություններից որն է նկարագրում լավագույն գաղտնաբառը:**
a. Հեշտ հիշվող և կարճ մի բան:
b. Երկար գաղտնաբառ, որը պարունակում է տառեր, թվեր և խորհրդանշաններ (անհրաժեշտ կլինի գրի առնել այն, քանի որ հիշելը բարդ կլինի):
c. Ձեր անունը հետևից առաջ, վերջում էլ ձեր ծննդյան ամսաթիվը:
d. Բառ, որը չի գտնվի բառարանում, առնվազն ութ նիշից, որը կպարունակի տառեր, թվեր և խորրդանշաններ, որ կկարողանաք հիշել:

**11. Ինչ-որ մեկը ձեր քեֆի լուսանկարն է վերբեռնել հանրային հարթակ, որտեղ դուք պառկած եք հատակին և ձեր կողքին օղու դատարկ շիշ է: 50 հոգի մեկնաբանություններ են թողել լուսանկարի տակ: Ի՞նչ կանեք:**
a. Ոչինչ, դուք չեք խմում, ձեր ընկերներն են նկարը սարքել:
b. Զանգում եք այն անձին, ով տեղադրել է լուսանկարը և խնդրում այն հեռացնել:
c. Զանգում եք կայքի ադմինիստրատորին և խնդրում, որ ձեր լուսանկարը հեռացնեն, քանի որ այն խախտում է կայքի պայմաններն ու նորմերը:
d. Դուք հասցնում եք պատասխան հարված ունեք. համացանցում տեղադրում եք ձեր ընկերոջ «զվարճալի» լուսանկարները և այնպես անում, որ բոլորն իմանան դրանց մասին:

**12. Ստորև նշվածներից որո՞նք են ձեր տվյալների լրացուցիչ պաշտպանության միջոցները:**
a. Մոնիթորի կարճաժամկետ կողպեքն ու գաղտնաբառի հայցումը
b. SIM քարտի գաղտնաբառը
c. Տվյալների հեռահար հեռացումը
d. Կնկնօրինակների կանոնավոր ստեղծումը
e. Ծրագրակազմի կանոնավոր թարմացումը
f. Հակավիրուսները:

**13. Դուք ընկերների խմբով հրավիրված եք երեկույթի, սակայն անհանգիստ եք, թե ինչ կարող է հայտնվել առցանց այդ երկույթից հետո. Ի՞նչ պետք է անեք:**

Created by European Schoolnet in collaboration with the Insafe Network and with the support of Google, Liberty Global and the European Commission / Creative Commons License by-nc-nd/3.0

a. Ապահովեք անթերի վարքագիծ շաբաթ կիրակիի ընթացքում:
b. Մի գնացեք, շատ ռիսկային է:
c. Քննարկում անցկացրեք ձեր ընկերների հետ շաբաթ-կիրակիից առաջ և բացատրեք ձեր մտահոգությունները՝ բացատրելով նրանց, թե ինչու եք զգուշավոր ձեր առցանց հեղինակության հարցում:
d. Սպասեք որ շաբաթ-կիրակին անցնի, հետո տեսեք, թե ինչ է տեղի ունենում:

**14. Բերված օրինակներից որո՞նք են ապօրինի:**

a. Առցանց այն ծառայություններից երգեր «քաշելը», որոնք համաձայնագրեր ունեն հաղինակային իրավունքի սեփականատերերի հետ:
b. iTunes-ից ներբեռնելը:
c. Դիտել մեկ այլ մարդու կողմից պատրաստված տեսանյութը, երբ կոնկրետ նշված է եղել, որ համերգի ժամանակ տեսագրում չի թույլատրվում:
d. «Քաշել» և ներբեռնել երգեր այնպիսի ծառայություններից, որոնք պայմանագիր չունեն հեղինակային իրավունքի սեփականատերերի հետ:

**15. Արդյոք օրինակա՞ն է վերստին տեղադրել մի ամբողջական հոդված, եթե հիշատակում եք հեղինակին և ներառում հղում բնագրին՝ առանց նրա թույլտվության:**

## Հիշեք

- Սոցիալական ցանցերի կայքերում կանոնավոր կերպով ստուգեք ձեր գաղտնիության կարգավորումները և թարմացրեք դրանք:
- Հնարավորության դեպքում օգտվեք անվտանգ կայքերից, օրինակ ՝ https, քանի որ այդ կայքերը տեղեկությունները գաղտնագրում են:
- Եթե ժամանակ չունեք նոր կայքի միանալիս կարդալու բոլոր պայմաններն ու նորմերը, մտածեք EULAlyzer-ի պես գործիքներից օգտվելու մասին:
- Մենք բոլորս պատասխանատվություն ենք կրում ոչ պատշաճ նյութերի հայտնաբերման ժամանակ ահազանգել համապատասխան մարմիններ: Մեր ակտիվությամբ կարող ենք Համացանցը դարձնել ամեզի լավ միջավայր բոլորի համար:
- Փնտրեք ձեր անունն առցանց (կամ ստեղծեք Google ազդանշան դա անելու համար) ավելի լավ հասկանալու, թե ինչ կտեսնեն ուրիշները, երբ ձեզ որոնեն ցանցում:
- Մտածեք տեղադրելուց առաջ:

Created by European Schoolnet in collaboration with the Insafe Network and with the support of Google, Liberty Global and the European Commission / Creative Commons License by-nc-nd/3.0

## Փնտրում եք տեղեկատվություն և խորհրդատվություն:
## Կապվեք Insafe-ի հետ ձեր երկրում:

| | | | |
|---|---|---|---|
| Ավստրիա | www.saferinternet.at | Լատվիա | www.drossinternets.lv |
| Բելգիա | www.clicksafe.be | Լիտվա | www.draugiskasinternetas.lt |
| Բուլղարիա | www.safenet.bg | Լյուքսեմբուրգ | www.bee-secure.lu |
| Կիպրոս | www.cyberethics.info | Մալթա | www.besmartonline.org.mt |
| Չեխիայի հանրապետություն | www.saferinternet.cz | Նիդեռլանդներ | www.digibewust.nl |
| Էստոնիա | www.targaltinternetis.ee | Նորվեգիա | www.medietilsynet.no |
| Դանիա | www.medieraadet.dk | Լեհաստան | www.saferinternet.pl |
| Ֆինլանդիա | www.meku.fi/fisic/ | Պորտուգալիա | www.internetsegura.pt |
| Ֆրանսիա | www.internetsanscrainte.fr | Ռումինիա | www.sigur.info |
| Գերմանիա | www.klicksafe.de | Ռուսաստան | www.nedopusti.ru |
| Հունաստան | www.saferinternet.gr | Սլովակիա | www.zodpovedne.sk |
| Հունգարիա | www.saferinternet.hu | Սլովենիա | www.safe.si |
| Իսլանդիա | www.saft.is | Իսպանիա | www.protegeles.com |
| Իռլանդիա | www.webwise.ie | Շվեդիա | www.medieradet.se |
| Իտալիա | www.generazioniconnesse.it | Միացյալ Թագավորություն | www.saferinternet.org.uk |
| Հայաստան | www.safe.am | | |


**Երախտագիտության խոսք**

Ստեղծված է՝

- European Schoolnet-ի կողմից
- Insafe ցանցի հետ համագործակցությամբ և Liberty Global-ի և Googleի օժանդակությամբ
- 2013թ.

Ձևավորումը՝ Iddifix

Հատուկ շնորհակալություն Շարլոթին, Կլեմենտին, Էլենին, Ֆլորանին, Իզաբելին, Հաննային, Ջոշին, Լյուքոսին, Լիվիին, Թերեզային, Յորիքին, Իոաննային, Մանոնին, Լիսային, Զարիին և ուսուցիչներին, ծնողներին և աշակերտներին սույհրապարակման ստուգմանն ու մշակմանը մասնակցելու համար:


## Հեղինակային իրավունք


Վերնագիր՝ The Web We Want

Prefix: 9789491440

ISBN-Number: 9789491440427

EAN: 9789491440427



Copyright: this work is licensed under the Creative Commons Attribution-Noncommercial-NoDerivative Works 3.0 Unported License. To view a copy of this license, visit:
http://creative commons.org/licenses/by-nc-nd/3.0



«Մեր երազած համացանցը» գիրքը հայերեն պատրաստել է «Մեդիակրթության կենտրոն» կազմակերպությունը Ապահով Համացանց Հայաստան ծրագրի շրջանակներում:

Համացանցը դուռ է բացում դեպի մի պայծառ, ոգևորող աշխարհ, որը լի է հետազոտելու, հաղորդակցվելու և ստեղծագործելու անսահման հնարավորություններով: Համեմատած դեմ առ դեմ միջավայրերին՝ սա մի վայր է, որտեղ ծաղկում են հետաքրքրասիրությունն ու ստեղծարարությունը և որտեղ երիտասարդները զարգացնում են բազում հմտություններ առերևույթ պակաս սպառնալից կերպով: Ցանցն, այդուհանդերձ, ունի խութեր անզգույշների համար: Ինչպես պատանիների կյանքի մնացած ասպարեզներում, կրթությունը կարևոր է առցանց միջոցներն առավել մեծ զգուշավորությամբ օգտագործելն ամրապնդելու հարցում: «Մեր երազած Համացանցը» ուսուցողական ձեռնարկ է 13-16 տարեկան երեխաների համար՝ մշակված նրանց հետ միասին և նրանց համար: Դրա նյութն ու մոտեցումները, որոնք համապատասխանեցված են այսօրվա երիտասարդության կարիքներին և նախընտրություններին, խթանում են մտորումներ այնպիսի հարցերի վերաբերյալ, ինչպիսիք են թվային ոտնահետքերը, հեղինակությունը, իրավունքներն ու պարտականությունները: Միևնույն ժամանակ, ներառված են տարբեր պրակտիկ վարժություններ, որոնց միջոցով երիտասարդները կարող են կատարել փորձի փոխանակում և քննության առարկա դարձնել իրենց առցանց պրակտիկան: Ուսուցիչները, ծնողներն ու այլ դասախոսները կարող են օժանդակ նյութեր գտնել ձեռնարկում զետեղված հարցերի և վարժությունների վերաբերյալ հետևյալ հղումով՝ www.webwewant.eu, ինչը ևս հարթակ է, որտեղ երիտասարդները կարող են ներկայացնել իրենց պատասխանները:

Co-funded by the
European Union